№ 31 ՇԱԲԱԹ, 12 ՓԵՏՐՎԱՐԻ

1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱԲԱԹ, 12 ՓԵՏՐՎԱՐԻ № 31

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ, 5 ԿՈՊ.
Թիֆլիսում զրկվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rèdaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ՆԵՐԿԱՅ 1911 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ
(39-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը 9 ր., 9 ամսվանը 8 ր., 8 ամսվանը 7 ր., 7 և 6 ամսվանը 6 ր., 5 ամսվանը 5 ր., 4 ամսվանը 4 ր., 3 ամսվանը 3 ր., 2 ամսվանը 2 ր., 1 ամսվանը 80 կ. և 20 կ. պոստի ծախք։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ս. Նշան եկեղեցու միաբան Գարեգին քահ. Առաքելեանցը իր զաւակներով՝ Աշխէն, Մանիա և Լևոն՝ խորին վշտով յայտնում են բարեկամներին և ծանօթներին, առաջինը նոյնպէս իր պաշտօնակից հոգևորականներին և ծխականներին, իր անփոխարինելի ամուսնու, իսկ որդիքը իրանց անմոռանալի մօր՝

Սօֆիա Յարութիւնեան ԱՌԱՔԵԼԵԱՆՑԻ

անակնկալ մահը, որ տեղի ունեցաւ փետրվարի 8-ին, առ. ժ. 4-ին։ Յուղարկաւորութիւնը այսօր, շաբաթ, առ. ժամը 10-ին իր տանից (Հալաբար, Բօզովայա հրապ. № 5) դէպի Շամքորեցոց ս. Աստուածածին եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը

141. 2—2

Կարճատև հիւանդութիւնից յետոյ փետրվարի 9-ին երեկոյեան ժամը 11½-ին վախճանվեց

Իվան Միխայլովիչ ՄԻՆԱՍԵԱՆՑԸ,

որի մասին սրտի խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին հանգուցեալի կինը, զաւակները, թոռները, եղբօր-որդիներն ու դուստրները։ Թաղումը այսօր, փետրվարի 12-ին, ցերեկվայ ժամը 12-ին, Սուրամում։

ՆԵՐԿ. 37.

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Երկուշաբթի, փետրվարի 14-ին
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ
Առաջին անգամ
ԻՆՔՆՈՒՐՈՅՆ
ՓԱՌԱՆՁԵՄ
Դրամա 5 արար., Մամիկոն Գէորգեանի

Մասնակցում են. տ. տ. Արաքս, Դուրեան-Արմէնեան, Զաբէլ, Ժասմին, պ. պ. Աբէլեան, Ալլահվերդեան, Աւետեան, Զարիֆեան, Լաքա, Ղազարեան, Միրզոյեան, Յարութիւնեան, Շահխաթունի, Ուշտունի և ուր.։

Գլխ. ռեժիսոր՝ Ա. Արմէնեան

Սկիզբը երեկոյեան ժամը ճիշդ 8-ին է։ ◆ Տեղերի գները բենեֆիսային են։

Վարդանանց տօնի առիթով պատրաստվում է «ՍԱՆԴՈՒԽՏ ԿՈՅՍ», Գ. Զուբարի, պարերով և երգերով։

Վարչութեան հերթապահ անդամներ (Գ. Կաֆեան
(Գ. Լևոնեան

առ. (ա.օ.) 144. 2—1

ԱՅՍՕՐ, ՇԱԲԱԹ, ՓԵՏՐՎԱՐԻ 12-ԻՆ
ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՆԵՐՈՒՄ
ՅՕԳՈՒՏ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԿԸ ԿԱՅԱՆԱՅ
ԵՐԵԿՈՅԹ
ՀԵՏԵՒԵԱԼ ԾՐԱԳՐՈՎ.

I

ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԲԱԺԻՆ բարեհաճ մասնակցութեամբ՝ օր. օր. Ն. Գ. Կօվալչիի, Ն. Ա. Ասլամազեանի, տ. տ. Օ. Ա. Ֆօն-Վունդէր-Մալինօվսկայայի, Օ. Մ. Մայսուրեանցի և պ. պ. Շամրի, Արմէնեանի, Վ. Գ. Վալերիանօվի (Զիսլեանի)։

II

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՊԱՐԵՐ
(սօլօ և խմբական) ազգային տարազներով

III

ՀԱՐՍԱՆԵԱՑ ՀԱՆԴԷՍ ԳԱՒԱՌՈՒՄ
փակլներով, երաժշտութեամբ, գերասան պ. Աւետեանի ղեկավարութեամբ։

IV

ՎԻՃԱԿԱԽԱՂ—ԱԼԼԷԳՐԻ, petits-chevaux, ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆ—կատարելու է յայտնի դիմագուշակող օր. Թամարան, ԾԱՂԻԿՆԵՐ և այլն։

V

ՊԱՐԵՐ՝ եւրոպական և ասիական, երաժշտութիւն, զինուորական օրկէստր, սազանդար և դուդուկ։

Մուտքի վճարն է 2 ր. 20 կ., իսկ տարրական դպրոցների ուսուցիչ-ուսուցչուհիների և ուսանողների համար 1 ր. 10 կ.։

Տղամարդիկ պէտք է լինեն սև զգեստով (սիւրտուկով), ֆրակով կամ ազգային տարազով։

Սկիզբը երեկոյեան ժամը 9-ին։

Տոմսակները կարելի է ստանալ Ե. Ա. Տատուրեանի, Ս. Գ. Կաֆեանի, կոնդիտէր՝ Լօռի, Մասխուլի մագազիններում, Ընկերութեան գրասենեակում՝ Արաս-Աբաշեան հրապ. № 7. ս. ա. և Թիֆլիսի Ժողովարանի շվէյցարի մօտ։

125. 2—2

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ
ԺՈՂՈՎՐԴ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ
Շաբաթ, փետրվարի 12-ին
Հայոց Դրամ. Ընկ. Թատերասէրների խումբը բարեհաճ մասնակցութեամբ տ. Արաքսի, պ. պ. Զարիֆեանի, Ա. Յարութիւնեանի և սկսնակ դերասանների
կը ներկայացնէ
ՈՒՐԻԷԼ ԱԿՕՍՏԱ
Ողբերգութիւն 5 գործ., հեղ. Գուցկօվի, Թարգմ. Աւալեանի

Մասնակցում են. տ. տ. Արաքս, Ցասմիկ, օր. Մարգարիտ, պ. պ. Ահարոնեան, Գալստեան, Զարիֆեան, Ղազարեան, Ծոնեան, Հայկազեան, Յարութիւնեան, Յովհաննիսեան, Ռուսեան, Սերժ, Տէր-Յովհաննիսեան, Օհանեան և ուրիշները։

Սկիզբն է երեկոյեան ժամը ճիշդ 8-ին։
Տեղերի գները 5-ից մինչև 50 կոպ.։

Հերթապահ կարգադրիչներ՝
Սարեան, Ստամբոլցեան և Փիրումեան

142. 1—1

Շուտով լոյս կը տեսնի
„ԱՐՕՐ"
ամսագրի ՅՈՒՆՎԱՐԻ համարը
ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
1911 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ԱՐՕՐԻ» գինն է 4 ր. «Մշակի» բաժ. համար. ոչ բաժանորդների համար՝ 6 ր.։ Բաժնեգին, յօդուած, նամակ ուղարկել այս հասցէով. Тифлисъ, редакція газеты „Мшакъ", для „АРОРА". Tiflis (Caucase), Redaction „Mschak" pour „AROR".

ՎՏԱՆԳՆ ԱՆՑՆՈՒՄ Է

—

Ռուսաց կայսերական կառավարութեան ներկայացրած ուլտիմատումը Չինաստանին մի րոպէ երկիւղ և յուզմունք առաջացրեց, որ համաշխարհային խաղաղութիւնը կարող է խանգարուել և [illegible] նորից կարող է ծանրանալ մարդկութեան վրա։

Ի հարկէ, ամեն մի պետութիւն, երբ իր շահերը և իրաւունքները տեսնում է ոտնակոխ եղած և բռնաբարված, պարտաւոր է հանդէս գալ և պաշտպանել իրան, բայց պէտք է հնացած և միջնադարեան համարել այն կարծիքը, թէ ոտնակոխ եղած իրաւունքները պաշտպանելը և վերականգնելը կարելի է միայն պատերազմի միջոցով։

Պատերազմի հետևանքները այնքան սոսկալի և ահռելի են, նրա գործած աւերումները մարդկութեան ոչ միայն տնտեսական, այլ և բարոյական, մտաւոր-հոգևոր կեանքի մէջ այնքան ահագին են, որ այժմ քաղաքակիրթ պետութիւններն իրանք ամեն կերպ ձգտում են և աշխատում՝ որքան կարելի է՝ խոյս տալ պատերազմից և այլ միջոցներ որոնել վէճը լուծելու համար։

Չինաստանի զիջող և խաղաղասիրական պատասխանը մարդկութեան կրծքից վերցնում է մի ծանր քար, որովհետև նա ցոյց է տալիս, որ վէճը Ռուսաստանի և Չինաստանի միջև հնարաւոր է լուծել խաղաղասիրական, իրաւախոհական միջոցով։

Եւ ճշմարիտ, միթէ երկու պետութիւնների միջև ծագած վէճը չէ կարող քննվել և լուծվել կամ Հաագայի միջազգային մեծ ատեանի և կամ երկու կողմից ընտրված միջնորդ դատաւորների ձեռքով։

Կը ցանկայինք ընդհանուր մարդկութեան բարօրութեան համար, որ արդարանայ խաղաղասէրների ակնկալութիւնը՝ լուծված տեսնել ռուս-չինական վէճը խաղաղ եղանակով, միջազգային կամ միջնորդ դատարանի միջոցով։

Հ. Ա.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
10 փետրվարի

Պետերբուրգ.—Սենատոր Նէյդգարդտը Բարձրագոյն բարեհաճեցողութեաններկայացրեց ամենահպատակ հաշւետւութիւն Պրիվիսլինեան երկրի և Վարշավայի զինուորական շրջանի կառավարական և հասարակական հիմնարկութիւնները բեվիզիայի ենթարկելու մասին, և զեկուցագիր՝ արքունի, զեմստվային և քաղաքային կամուրջների կառուցման գործողութիւնների հերթական բեվիզիայի մասին։

—

Պետերբուրգ.—Բիւջետային մասնաժողովը 1911 թ. պետական եկամուտների գումարը որոշեց 2.713.108,827 րուբլի. գլխաւորագոյն աւելացումները նախատեսված են. երկաթուղիներից՝ 5 միլիօն, խմիչքեղէնների արքունի վաճառումից՝ $8^1/_2$ միլիօն։

—

Մոսկվա.—Գիշերս հրդեհ ծագեց Բալլէի գործարանի բանուորների տան մէջ։ Ազատվելով կրակից պատուհանների միջոցով, 8 մարդ վիրաւորվեցին ծանր, 17-ը թեթև։ Փլատակների տակ գտան 5 դիակ, որոնցից երկուսը երեխաներ են։

—

Սերդօբսկ.—Իլիոդոր աբեղան յայտնեց, որ հնազանդվում է սինօդի կարգադրութեան. նա կը գնայ իր նոր պաշտօնատեղին՝ Տուլայի թեմը, փետր. 10-ին։

—

Բուդապեշտ։—Աւստրիական պատգամաւորութեան մէջ Գրամայերը Աւստրիայի անունից ողջունեց Իտալիային 50-ամեայ միացման առիթով։

—

Վիէննա.—«Ցէյտը» Էրենտալի և Մասարիկի բանակռւի առիթով յայտնում է, որ Էրենտալի ասածները՝ իբր Մասարիկի մեղադրանքները մտացածին են՝ անհիմն են։

—

Լօնդօն.—Ռէյտէրի գործակալութիւնը հաղորդում է, որ արտաքին գործերի մինիստրութիւնը ստացել է ռուսական պատասխանի բնագիրը անգլիական բողոքին՝ Սպիտակ ծովում ձուկ որսալու Դումայի օրինագծի վերաբերութեամբ։ Պատասխանը կաբինէտը քննում է։

—

Լօնդօն.—Համայնքների պալատը առաջին ընթերցմամբ ընդունեց պարլամենտական օրինագիծը կառավարական կուսակցութեան բուռն ծափահարութիւնների տակ։

Թագուհի Վիկտորիայի արձանի բացումը նշանակվեց մայիսի 3-ին։

—

Պարիզ.—Յանկարծամահ եղաւ զինուորական մինիստր Բրէնը։

Պալատում զրահանաւեր կառուցանելու օրինագծի քննութեան ժամանակ սօցիալիստ Սամբան առաջարկեց կառավարութեանը՝ հարց բարձրացնել զինուորման սահմանափակման համար միջազգային համաձայնութիւն կապելու։ Սօցիալիստ Գուդը յայտնեց, որ երկու կառուցված զրահանաւերի յատակագծերը կորել են։

—

Վաշինգտօն.—Տաֆտը սենատին ներկայացրեց Եապօնիայի հետ կնքված պայմանագրի նախագիծը, որով եապօնացիների գաղթականութիւնը դէպի Ամերիկա ազատ է յայտարարվում։

—

Խրիստիանիա.—«Բերլ. Տագ.»-ի ինտերվիւի առիթով մինիստր-նախագահ լրացնում է, որ 10 րոպէ շարունակվող զրոյցի մէջ նա յայտնեց, որ Նորվեգիայի և Ռուսաստանի յարաբերութիւնները միշտ եղել են բարեկամական. եթէ այժմ Նորվեգիան մտադիր է ուղարկել աւելի նշանաւոր, բայց և չափազանց համեստ զինուորական ոյժեր դէպի երկրի ծայրայեղ հիւսիսը, այդ անվում է նորվեգիական չէզոքութիւնը պաշտպանելու անհրաժեշտութիւնից։

—

Սերաեվօ.—Սէյմ։ Սերբերը բիւջէի վերաբերմամբ յայտնեցին, որ արտայայտելով միապետին հպատակութեան զգացմունքներ՝ նրանք պահանջում են ընդլայնել սահմանադրական իրաւունքները, թէև կարծում են, որ արդի կացութիւնը բաւականաչափ լաւ է նախկինից։ Պատգամաւոր Սրօսկիչը ասաց, որ սերբերը միապետութեան դուալիստիկ կազմի կողմնակիցներ են Բօսնիայի աւտօնօմիայով և բողոքում են երրորդութեան դէմ։

—

Բերլին.—Համաձայն 1910 թւի դեկտեմբերի 1-ի վիճակագրութեան, Գերմանիայի ազգաբնակութիւնը հաւասարվում է 64.896,881։

—

Սօֆիա.—Նախկին մինիստրներ Պետրօվը և Գուդօվը ազգային ժողովին ներկայացրած բացատրութիւնների մէջ ժխտում են իրանց յանցանքը, մատնանշելով որ նրանց գործողութիւններից մի քանիսը սանկցիա ստացան ազգային ժողովից։

Ազգային ժողովում, ժամանակաւոր թիւրք-բօլգարական առևտրական պայմանագրի քննութեան ժամանակ, մինիստր Լեապչէվը ասաց, որ պայմանագրի առանձին կարևոր նշանակութիւնը կայանում է նրանում, որ Թիւրքիան ճանաչելու է զիջումների րէժիմի օգտակարութիւնը։ Մեծամասնութեանը պատգամաւորը յայտնեց, որ Բօլգարիան ցանկանում է Թիւրքիայի հետ ունենալ տնտեսական և քաղաքական բարեկամութիւն յանուն «բալկանեան ժողովուրդների համար» սկզբունքի։ Պայմանագիրն ընդունվեց միաձայն։ Նաև ընդունվեց բօլգարական-իտալական հիւպատոսական կօնվէնցիան։

—

(Լրագիրներից)

«Daily Telegraph»-ի տեղեկութիւնների համաձայն, Ֆէրդինանդ Թագաւորը պատրաստվում է դաշն կապել Աւստրիայի հետ։ Այդ նպատակով էլ առաջարկվեց ազգային ժողովին սահմանադրութեան փոփոխութիւնը, որի համաձայն Թագաւորը իրաւունք է ստանում պայմանագրեր կնքել օտարազգի պետութիւնների հետ առանց պարլամենտի հաւանութեան, նոյնիսկ առանց նրա գիտութեան։ Ինչպէս յայտնի է արդէն հեռագիրներից, սահմանադրութիւնը փոփոխելու նախագիծը ստացաւ պալատի հաւանութիւնը, և Ֆէրդինանդ Թագաւորը, Ռումինիայի օրինակին հետևելով, իբր թէ մտադիր է օգտվել ստացած իրաւունքից Աւստրո-Ունգարիայի հետ դաշինք կապելու համար։

«Daily Telegraph»-ը պնդում է, որ Ռուսաստանի համար այդ անցանկալի դէպքը չէ կարող առկայն անսպասելի լինել նրա համար, որովհետև բօլգարական Ֆէրդինանդը բացարձակ իր դժգոհութիւնն է յայտնել Իզվօլսկիի քաղաքականութեան դէմ։ Լրագիրը նոյնիսկ նրան վերագրում է այսպիսի խօսքեր. «Այժմ ռուս արջը կարող է քնել առաջիկայ տասն-տասնհինգ տարիներում։ Այդ ժամանակաշրջանում Բօլգարիան ինքը պէտք է հոգայ իր պաշտպանութեան մասին։ Սակայն, Բօլգարիան խեղճի երկիր է, և պէտք է ձգտէ համաձայնելու իր ընտանիքի բոլոր անդամների հետ (հասկացվում է Մակեդօնիան)։ Մինչդեռ, խաղաղութեան ռուսական քաղաքականութիւնը, ինչպէս էլ որ լինի, չէ կարող մեզ օգնել այդ ուղղութեամբ»։ Այդ տեղեկութիւնը հաղորդող «Lokal Anz.»-ը դրանում տեսնում է անգլիական լրագրի ցանկութիւնը՝ գրգռել Թիւրքիային ընդդէմ Աւստրիայի։

Միևնոյն ժամանակ Սօֆիայից հաղորդում են «Neue Freie Presse»-ին, որ Ֆէրդինանդ Թագաւորը պատրաստվում է մօտիկ ապագայում այցելել ունգարական իր Պուստօպօլէն կալուածքը, որտեղից նա կը գնայ Վիէննա։

—

«Japan Times»-ը հաղորդում է, որ չորս եապօնացի մինիստրներ դիմել են կայսրին խնդրելով ենթարկել իրանց խիստ պատժի, որովհետև նրանք իրանց պատասխանատու են համարում Եապօնիայում անիշխանութիւնը ուժեղանալուն համար։ Այն հանգամանքը, որ Կոտօկիի դաւադրութիւնը կարող էր կազմակերպվել առանց նրանց գիտութեան, հանդիսանում է բաւականին ապացոյց նրանց անփոյթ վերաբերմունքի դէպի իրանց պարտականութիւնները։

Խորհրդի նախագահ մարկիզ Կացուրան այդ առիթով երկար խօսակցեց միկադօյի հետ։ «Մեզ հաղորդեցին,—ասում է «Japan Times»-ը,—որ մարկիզը, համարելով իրան անմիջական պատասխանատու Կոտօկիի և նրա համախոհների վարմունքի համար իրանց յանձնված երկրում, միջնորդում է, որ պատիժ տրվի։ Միևնոյն նպատակով և միևնոյն պատճառով դիմել են գահին ներքին գործերի մինիստր բարօն Խիրատան, երկրագործութեան ու առևտրի մինիստր բարօն Ուրան և ժողովրդական լուսաւորութեան մինիստր Կօմացուբարան»։

—

Ի լրումն մեր նախկին հաղորդածի, հաղորդում ենք հետևեալ մանրամասնութիւնները Վիլհէլմ կայսրի գիւղատնտեսական դասախօսութեան մասին։

Կայսրը գիւղատնտեսական խորհրդի մէջ կարդաց իր զեկուցումը իր «Կադինէն» կալուածքում ճահճոտ տեղերը չորացնելու մասին։

Ուրախ տրամադրութիւն ստեղծեց Վիլհէլմի պատմութիւնը, թէ ինչպիսի մեծ դժուարութեամբ է աջողվել նրան ձեռք բերել իր կառավարչից 75 հազար մարկ, որ անհրաժեշտ էր այդ գործի համար։ Նա հարկադրված է եղել գործ դնել իր բոլոր պերճախօսութիւնը։

Կայսրը մանրամասնաբար պարզեց չորացնելու աշխատանքների ընթացքը, հաղորդեց նրանց արժէքի և հետևանքների մասին։

Ներկայումս նախկին ճահիճները բերում են տարին մօտ 12,000 մարկ։

Կայսրը այդ հարցի հետ միասին շօշափեց Գերմանիայի անասնապահութեան դրութիւնը և այն կարծիքը յայտնեց, թէ ժամանակը հասել է, որ Գերմանիան միսը ձեռք բերէ իր մէջ, և ոչ դրսից բերել տայ։ Իր փորձում նա տեսնում է այդպիսի նշան, որ զարգացման դէպքում կարող է ցանկալի հետևանքներ տալ։

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

10 փետրվարի

Կ. Պօլիս.—Պալատ։ Ֆինանսների մինիստրը վկայեց, որ պետական եկամուտները շարունակ աւելանում են, և յոյս յայտնեց, որ երկու տարվայ մէջ կարելի կը լինի հաւասարակշռութիւն մտցնել բիւջէի մէջ։

Մինիստրը յայտնեց, որ ֆինանսական մերձեցում է կայացել Ֆրանսիայի հետ, որի առիթով պարիզեան բորսան ընդունել է թիւրքական արժեթղթեր։

—

Թաւրիզ.— Խօյում թիւրքաց պաշտօնաթող հիւպատոս Ասադուլ-բէյը և սահմանագլխային կոմիսար Րէֆիկ-բէյը, անցնելով կառքով Թաւրիզի ճանապարհով 24 թիւրք հեծեալ զինուորներով և 12 պարսիկ կօզակներով, ձերբակալեցին Սօֆիան կայարանում ճանապարհի ծառայող թիւրքահպատակ Հաջիեվին՝ իր թէյարանից ոգելից խմիչքներ չը տալու՝ համար, որպիսի խմիչքները չը գտնվեցին նրա մօտ։ Շնորհիւ Թաւրիզի ռուսաց գեներալ-հիւպատոսի եռանդուն միջամտութեան, ապօրինաբար ձերբակալված Հաջիեվը արձակվեց հետևեալ օրը։

—

(Լրագիրներից)

Թիւրքիայի ծովային նոր նշանակված մինիստր Մահմուդ-Մուխտար-բէյը կառավարութեան քննութեանն է ներկայացրել նաւատորմի վերակազմութեան այն ծրագիրը որ մշակել է յատուկ յանձնաժողովը անգլիացի ծովապետներ Գէմբլի և Վիլլիմսի զեկուցումների հիման վրա։

Ծրագիրը առաջարկում է նաւատորմային աշխատանքները կատարել 10 տարվայ ընթացքում, երբ կառուցված պիտի լինեն վեց «դրէդնօուտ», 20 ականաւոր կրէյսերներ և 6 ջրասոյզ նաւակներ։ Առանձին յանձնաժողով է կազմված, որ պիտի որոշէ թէ ինչ կերպ պէտք է կազմակերպվի ծովային արտիլերիան։ Յանձնաժողովի անդամները ուղևորվել են արդէն Եւրոպա, որ ուսումնասիրեն Անգլիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի թնդանօթային սիստեմները։

—

Արժանահաւատ աղբիւրից հաղորդում են Պրևիզից, որ թիւրքաց զօրքի քրիստոնեայ զինուորների մէջ մեծ դժգոհութիւն է տիրում։ Նրանց արգելում են խաչակնքել երեսները, ստիպում են գլուխը ածիլել և պասերին միս ուտել։ Քրիստոնեայ զինուորների հետ ունեցած վարվեցողութիւնը այն աստիճան վրդովեցուցիչ է, որ շատ թիւրքահպատակներ խուսափելով զինուորական ծառայութիւնից փախչում են Ասիա և Ամերիկա։

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՅՈՒԶՄՈՒՆՔՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

10 փետրվարի

Կազան.—Կանանց բարձր դասընթացքների խորհուրդը մի կոչով դիմեց ունկնդրուհիներին առաջարկելով վերսկսել պարապմունքները և նախազգուշացնելով, որ դասընթացքները կարող են փակվել երկար ժամանակով։

—

Պետերբուրգ.—Համալսարանում ներքին շինութիւնները պահպանում է ոստիկանութիւնը։ Շատ պրօֆէսօրներ չեն դասախօսում հիւանդութեան պատճառով։ Տեղի ունեցան մի քանի դասախօսութիւններ արևելեան և իրաւաբանական ֆակուլտէտներում։ Աուդիտորիաներից մի քանիսը չը բացվեցին ունկնդիրների և դասախօսների բացակայութեան պատճառով։ Նախասենեակում կալանաւորվեց մի ուսանող, որ կասկածվեց քիմիական օբստրուկցիա կատարելու դիտաւորութեան մէջ։

Բեստուժևսկի դասընթացքներում, լեռնային և կանանց բժշկական ինստիտուտներում պարապմունքներ առաջվայ նման չը կան։

Միջնակարգ ու բարձր կրթութեան հարցի առիթով Պուրիշկևիչը մի շարք միջոցներ առաջարկեց բարձր դպրոցը կենսունակ դարձնելու մասին։

—

Եկատերինօսլաւ.—Լեռնային դպրոցի խորհուրդը որոշեց չը յետաձգել ուսանողական աշխատանքների յանձնումը և դադարեցնել գործադուլաւորներին թօշակներ տալը։

—

Պետերբուրգ.— Պետական Դումայի հարցապնդումների մասնաժողովը ընդունեց այն հարցապնդումը, որ ուղղված է լուսաւորութեան և ներքին գործերի մինիստրներին՝ Օդեսսայի իշխանութեան և Նօվօրօսիյսկի համալսարանի վարչութեան ապօրինի գործողութիւնների մասին։

—

Խարկով.—Համալսարանում շարունակվում են համարեա բոլոր դասախօսութիւնները։ Ունկնդիրների թիւը 300-ից անցնում է։

—

Օդեսսա.—Համալսարանում դասախօսութիւնների ժամանակ ցրեցին վատ հոտ ունեցող գազ։ Կալանաւորվեցին ութ ուսանողներ։ Համալսարանական իշխանութիւնը հարցական թերթիկներ է ուղարկել ուսանողներին իմանալու նրանց դիտաւորութիւնը դասախօսութիւններին գալու կամ չը գալու մասին։

Կանանց բարձր դասընթացքներում պարապմունքներին ներկայ են սակաւ ունկնդրուհիներ։ Կալանաւորվեցին 8 ունկնդրուհիներ ոստիկանութեան պահանջները չը կատարելու համար։

—

Մօսկվա.—«Русскій Трудъ» տպարանում բռնվեց սօց.-յեղափոխական ուսանողների թռուցիկի շարուածքը։ Տպարանատէրը և կառավարիչը ձերբակալվեցին. տպարանը փակվեց։

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՈՒԼՏԻՄԱՏՈՒՄԻՆ

(Պաշտօնական)

Պետերբուրգ, 10 փետրվարի

Արտաքին գործերի մինիստրութեան գլխաւոր կառավարիչ իշխան Ցինի յայտագրի բնագիրը, յանձնված Պեկինի ռուսական դեսպանին 1911 թւի փետրվարի 7-ին. «Ես պատիւ ունէի ծանօթանալ ձերդ գերազանցութեան փետրվարի 3-ից հաղորդագրութեան բովանդակութեան հետ և պարտք եմ համարում ներկայացնել ստորև իմ պատասխանները վերոյիշեալի մէջ յիշված բոլոր կէտերի վերաբերմամբ։ Նախ՝ երկու պետութիւնների սահմանի այս և այն կողմի յիսուն վերստային շերտի սահմաններում փոխադարձաբար սահմանված է դաշնագիր կապած միւս երկրի ամբողջ տարածութեան արդիւնքների անմաքս ներմուծումը։ Այդ որոշումը դաշնագրի համաձայն պահպանվում էր շատ տարիների ընթացքում։ Ինչ վերաբերում է ռուսական կառավարութեան իրաւունքների սահմանափակման մասին յայտարարութեանը՝ ինքնուրոյնաբար սակագներ սահմանելու վերաբերմամբ Չինաստանի սահմանի վրա, ի բաց առեալ յիսուն վերստային շերտի, ես չեմ կարողանում պարզել ինձ համար, թէ ինչ էր ուզում ասել այդ յայտարարութիւնը և թոյլ եմ տալիս ինձ կարծելու, որ գործը վերաբերում է ինձ յանձնված մինիստրութեան հաղորդագրութեանը 1909 թւի դեկտեմբերի 22-ից, որով ես, չինական առևտրականների խնդրագրի հիման վրա, միջնորդում էի ռուսաց կառավարութեան առաջ այն մասին, որ նա ուշադրութեան առնէ առևտրական շահերը և յետաձգէ մաքսահարկերի գանձումը ի նշան բարեկամական յարաբերութիւնների։ Այդ միջնորդութեանը բաւարարութիւն տուեց ռուսաց կառավարութիւնը, և չը պէտք է սխալ բացատրութիւն տրվի իրաւունքների սահմանափակման մասով։ Երկրորդ, խառն գործերի քննութեան կարգը չինական և ռուսահպատակների միջև սահմանված է 1891 թւի դաշնագրի 11-դ յօդուածով և գործադրվում էր շատ տարիների ընթացքում, այնպէս որ ինձ վստահացած մինիստրութիւնը երբեք չէր բողոքում դրա դէմ։ Երրորդ, համաձայն պայմանագրի 12-րդ յօդուածի, ռուսահպատակները ունեն ժամանակաւոր իրաւունք անմաքս առևտրի թէ Մոնղոլիայի բոլոր կէտերում և թէ Իլիում, Տարբագատայում, Կալգանում, Ուրումցիում և առհասարակ անդրպարսպեան շրջաններում, որոնք գտնվում են Տեանշինի լեռնաշղթայի երկու կողմում։ Այդ իրաւունքը կը վերացվի, երբ առևտրի զարգացման հետ անհրաժեշտութիւն կը ծագի սահմանել մաքսային սակագին, որի մասին երկու կառավարութիւնները համաձայնութեան մէջ կը մտնեն։ Դաշնագրի որոշումը այն մասին, որ ռուսահպատակները Չինաստանի բոլոր վերոյիշեալ կէտերի վրա ներմուծման և արտահանման իրաւունք են ստանում առևտրի համար, որ գրված է պարզ և որոշ կերպով, Չինաստանը միշտ խստօրէն պահպանում էր։ Չորրորդ, դաշնագրի տասներորդ յօդուածը նախատեսում է ռուսական հիւպատոսարանների հիմնումը Կօբլօում, Կամիում և Գուչէնում առևտրի զարգացման չափով և չինական կառավարութեան հետ համաձայնութեամբ։ Ժամանակակից պայմանների ուշադիր ուսումնասիրութիւնը վերոյիշեալ կէտերում վկայում է նրանց մէջ առևտրի իսկական զարգացման մասին և չինական կառավարութիւնը սիրով յայտնում է իր համաձայնութիւնը՝ վերոյիշեալ երեք կէտերում ռուս հիւպատոսներ նշանակելու մասին, սակայն 12-դ յօդուածի որոշումների պայմանով առևտրի զարգացման, այսինքն մաքսային տարիֆի ներմուծման վերաբերմամբ։

«Հինգերորդ, համաձայն 1881 թ. պայմանագրի 11-րդ յօդուածի, այն կարգը, որպիսին պէտք է նկատի առնվի չինական տեղական իշխանութիւնների և ռուսական հիւպատոսների տեսակցութիւնների և առհասարակ յարաբերութիւնների ժամանակ պէտք է հիմնած լինի այն ուշադրութեան վրա, որպիսին պարտաւոր են միմեանց ցոյց տալ բարեկամ պետութիւնների պաշտօնական անձինք։

«Ի նկատի ունենալով, որ ցանկութիւն է յայտնված ճանաչելու ռուսական հիւպատոսներին իրանց պաշտօնական աստիճաններում, ես արգելք չեմ գտնում, որպէսզի գոյութիւն ունեցող ընդհանուր կանոնադրութիւնների հիման վրա փոխադարձաբար մշակվի յարաբերութիւնների որոշ կարգ նրանց միջև։ Ռուս և չին իշխանութիւնները միացեալ ոյժերով կը լուծեն զանազան ծանր խնդիրներ ամբողջովին 1881 թ. պայմանագրի 11-րդ յօդուածի հիման վրա, և տեղական իշխանութիւններին վերստին կառաջադրվի անհրաժեշտօրէն յատուկ ուշադրութիւն դարձնել այդ կէտի վրա։ Վեցերորդ՝ ռուսական կառավարութիւնը իրաւունք ունի պայմանագրի 13-րդ յօդուածի որոշումներով ղեկավարվել ինչպէս այն տեղերի, ուր հաստատվելու են հիւպատոսարաններ, այնպէս և Կալգանի վերաբերութեամբ։

«Չինական կառավարութիւնը երբեք չէ առարկել այն արտօնութիւնների դէմ, որոնք տրված են Ռուսաստանին պայմանագրական որոշումներով, որոնք բերված են վերոյիշեալ վեց կէտերում։ Բոլոր այն դէպքերում, երբ տեղական չինական իշխանութիւնները չեն կարողացել շփվել ռուս ներկայացուցիչների հետ, ինձ յանձնված մինիստրութիւնը միշտ պատուիրագրել է վարվել արդարացիօրէն և երբեք իրան թոյլ չէ տուել անտես առնել պայմանագրական որոշումները։

«Եթէ տեղական գործակալների հաղորդագրութիւնների զանազանութեան պատճառով՝ տեղի են ունեցել փոխադարձ ընդդիմախօսութիւններ, այդ երևոյթը պատկանում է միջազգային պրակտիկայի մէջ գործադրվող երևոյթների թւին և չէ կարող մեկնվել իբրև «պայմանագրի ոգուն անհամապատասխան ոգով»։ Այդօրինակ հարցերը կարող են լուծվել անկեղծ ու փոխադարձ բանակցութիւններով և արդարութեան ոգով իր ժամանակին վճռելով։ Ինձ միանգամայն անհասկանալի են՝ ձեր ցուցումները, երբ չինական կառավարութիւնը չէ ցանկանում պահպանել Ռուսաստանի հետ բարեկամական՝ պայմանագրերի վրա հիմնված յարաբերութիւններ։ Իսկ այն յայտարարութիւնը, որ Ռուսաստանը իրան ազատութիւն է վերապահում ընտրել բոլոր հնարաւոր միջոցները, բոլորովին չէ համապատասխանում բարեկամութեան գաղափարին երկու պետութիւնների միջև, և ինձ համար չափազանց վշտալի է, որ ռուսական կառավարութիւնը միանգամայն անսպասելի կերպով իւրացրել է այդ տեսակ հայեացք։

«Հաղորդելով վերոյիշեալի մասին ձեր գերազանցութեանը, իմ պարտականութիւնն եմ համարում թախանձագին խնդրել վկայել ռուսական կառավարութեան, որ Չինաստանի կառավարութիւնը մշտապէս պահել է պայմանագրական որոշումների [illegible] և իր պատրաստակամութիւնն է յայտնում լուծել բոլոր հարցերը ուղղակի պայմանագրերի իմաստով և հաշտարար ոգով, որպէսզի կարելի լինի պահպանել փոխադարձ շահերը և երկու պետութիւնների հնուց գոյութիւն ունեցող բարեկամական յարաբերութիւնները»։ (Հ. Գ.)

—

Պարիզ.—Մամուլը մեծ գոհունակութեամբ քննում է այն տեղեկութիւնները, որոնք թոյլ են տալիս յոյս դնել ռուս-չինական միջադէպի խաղաղ լուծման վրա։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՅՍՕՐՎԱՅ ԵՐԵԿՈՅԹԸ

Այսօր Թիֆլիսի ժողովարանում կը կայանայ երեկոյթ յօգուտ Կ. Հ. Բ. Ընկերութեան։ Երեկոյթի ծրագիրն է. կօնցերտային բաժին, գաւառական հարսանիքի շքեղ երթ, կովկասեան զանազան պարեր և այլն։

Համերգային բաժնում կը մասնակցեն պ.պ. Կօվալչի, ֆօն-Վանդեր, տ.տ. Մալինօվսկայա, Մայսուրեան և ուրիշ յայտնի արտիստական ոյժեր։

Ի նկատի առնելով երեկոյթի բազմաբովանդակ և հետաքրքրական լինելը և ընկերութեան համակրելի նպատակները, որը Թիֆլիսում պահում է ժողովրդական գրադարան-ընթերցարան, որբանոց որբ աղջիկների համար, ձրի աշակերտական ճաշարան 3,000 հոգու համար, իսկ գաւառներում գիւղական դպրոցներ և գրադարաններ, պէտք է յուսալ, որ հասարակութիւնը համակրանքով կը վերաբերվի և իր ներկայութեամբ բարոյական և նիւթական աջակցութիւն ցոյց կը տայ Բարեգործական Ընկերութեանը։

ՓՈՔՐԻԿ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

«Սուխումի շրջանում, ծխախոտի մշակման բոյնը, գրաւելով... ներկայացնում է մի ամենաընդարձակ տարածութիւն ծխախոտային պլանտացիաների, որոնք մշակվում և գիշատիչ կերպով շահագործվում են եկւոր տարրի ձեռքով, այն է՝ թիւրքահպատակ հայերի, յոյների, թիւրքերի և միայն մասամբ ռուսների, էստօնցիների և գերմանացիների ձեռքով»։ («Тифл. Листокъ» № 28)։

Սուխումի շրջանում հայերի և այլոց՝ ծխախոտի կուլտուրայով պարապելը բաւական հին պատմութիւն ունի և շատերի աչքերին փուշ է դարձած եղել։ Դեռ հանգուցեալ տխրահռչակ Վէլիչկօն կատաղի արշաւանք սկսեց այդ մի բուռը ժրաջան պիօնէրների դէմ, որոնց միակ մեղքը այն է եղել, որ քաջութիւն են ունեցել և ժրաջանութիւն գաղթելու Սուխումի դեռ այն ժամանակվայ ամայի շրջանը, ճահիճներ չորացրել, անտառներ կտրել և մտցրել այդ տեղերի համար անծանօթ թամբաքուն, ծխախոտի կուլտուրան և իրանց համար բարեկեցիկ դրութիւն ստեղծել, և որ եղել են հայեր... Այս հարցի առիթով գօլիցինեան սև օրերում հարց էր յարուցված բոլոր եկւոր գաղթականներին քշել-հեռացնելու իրանց մշակած, քրտինքով ցողած դաշտ-արտերից, սակայն, գոհութիւն Ալլահին, այն ժամանակվայ ռէժիմը ազատ մնաց այս լինելիք արդարացի անէծքից...

Այն օրերից շատ ջուր է անցել և ծովը թափվել, սակայն միևնոյն հարցը ուրիշ սօուսով հրամցնում է «Тифл. Листокъ»-ի մէջ ոմն Я. Л., «Табаководство въ Закавказьѣ» խորագրի տակ։

Եւ ինչ էք կարծում, ընթերցող, յօդուածագիրը գրելով՝ «աւազակաբարոյ կամ թալանչու նման շահագործող եկւորների կողմից» գիտէք յօդուածի ընթացքում ինչպէս է բացատրում։ Այն է՝ որ եթէ նոյն հողը շահագործէին տեղում ընդունված ձևով, այսինքն եթէ [illegible] նէին, պէտք է տարեկան արդիւնք ստացվէր դեսեատինից 70 րուբլի, իսկ ծխախոտ ցանելով և մշակելով ստանում են վերև յիշված նօվատօրները դեսեատինից տարեկան 240 րուբլի. և որովհետև այդ աշխոյժ և ժրաջան նօվատօրները յանդգնում են միևնոյն հողից այդքան մեծ արդիւնք ստանալ՝ շնորհիւ իրանց աչքաբացութեան, ուստի յօդուածագրի կարծիքով նրանք յափշտակում և թալանում են հողը և երկիրը...

Ամօթ է, վերջապէս, խիղճ ունեցէք, թողէք այդ մի բուռը հողը ժրաջան գաղթականներին իրանց կուլտուրական դերը կատարելու և իրանց հալալ աշխատանքը վայելելու։ Եթէ փարիսեցիութիւն չէ ձեր ձեւական քնքոյշ վերաբերմունքը դէպի տեղական բնակչութիւնը, ապա առաւել մեծ օգուտ տուած կը լինէք վերջինիս, եթէ յորդոր կարդաք, որ սա սովորի եկւորներից երկիր մշակելու կուլտուրական ձեւերը, հետևի նրանց, և ոչ թէ ձեր ափեխ ծփեխ յօդուածներով գրգռէք Սուխումի շրջանում տեղացի և եկւոր տարրը իրար դէմ։

Թւում է, թէ տեղական բնիկ ժողովուրդը բացի խորը շնորհակալութիւնը՝ չը պիտի

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԱԿԱՄԱՅ ՊԱՏԱՍԽԱՆ

Ես երբէք չէի կարծում, որ իմ համեստ կարծիքը մեր մատենագիր Շիրվանզադէի «Արմենուհի» դրամայի մասին՝ կարող կը լինէր նրան ստիպելու յայտնել այն, որ նորերս տպված էր «Հօրիզօնի» № 29-ի մէջ։ Մենք մեր քննադատութիւնը վերջացրել էինք ֆրանսիական իմաստուն առածով և միևնոյն ժամանակ ցանկութիւն էինք յայտնել, որ աւելի ձեռնհաս և հմուտ քննադատներ յայտնեն իրանց հեղինակաւոր կարծիքը վերոյիշեալ դրամայի մասին, որի ներկայացման միջոցին շատերը հանդիսականներից ընդդէմ նրան մտքեր յայտնեցին հէնց թատրոնում։ Ինձ թւում էր, որ յարգելի հեղինակը ամենայն ուրախութեամբ, ինչպէս ամեն մի գրող, պիտի լսէ իր գրուածքի մասին ամեն տեսակ կարծիքներ, եթէ նրանք յայտնվում են ամենայն անաչառութեամբ և անկողմնապահութեամբ, որոնք եղել են մեր սկզբունքը, բայց, դժբաղդաբար, այդ չէ երևում պ. Շիրվանզադէի յօդուածից։ Շատ ափսոս։ Ճշմարիտ է ֆրանսիական առածի իմաստը. La critique est facile, l'art difficile. Բայց եթէ խորապէս քննենք, կը տեսնենք, որ քննադատութիւնը ևս հեշտ բան չէ։ Եթէ քննադատից պահանջվում է լուրջ, բազմակողմանի պատրաստութիւն մի որևիցէ գրուածքի միտքը ըմբռնելու ու լուսաբանելու համար, այն ժամանակ՝ լօգիկաբար ասելով՝ ինչու չը պահանջել նոյնը ամեն մէկ գրողից՝ թէ վիպասան և թէ այլ, որ նա նոյնպէս լուրջ պատրաստութիւն ունենայ. բազմակողմանի զարգացում, սիստեմատիկական գիտութիւն և գրելու ընդունակութիւն։

Եթէ վերցնենք մեր գրողներին, օրինակ Րաֆֆիին, Պռօշեանին, Մուրացանին, Շիրվանզադէին և այլոց, կը տեսնենք, որ նրանցից ոչ ոք կանօնաւոր ուսում և բարձր զարգացում չէ ստացել, բայց՝ այնուամենայնիւ՝ նրանք տուել են մեզ յայտնի գրուածներ։ Ըստ Լ. Մանուէլեանի՝ Րաֆֆին համարվում է մի խոշոր տաղանդ, ինչպէս այդ երևում է պ. Մանուէլեանի գրուածքից*)։

Անտարակոյս, եթէ մեր գրողները ստացած լինէին բարձր ուսում, նրանց գրաւոր արտադրութիւնները աւելի արժէքաւոր կը լինէին և յարգելի ընդհանուր գրականութեան մէջ։ Եթէ այդ թերութիւնը նկատելի է մեր գրողների մէջ, դրա պատճառը որոնելու է նրանում, որ հայ՝ բարձր ուսում առած ինտելիգենցիան, որը անծանօթ է թէ մայրենի լեզուին և թէ իր ազգի անցեալ ու ներկայ կեանքին, չէ կարող մասնակցել մեր գրականութեան մէջ. և եթէ նա գրում է, գրում է օտար լեզուով, օրինակ Ջանշիեվ, Ղամբարօվ և այլք։ Այդ պատճառով մեր գրականութիւնը գտնվում է՝ շատ աննշան բացառութեամբ՝ առանց անհրաժեշտ բարձր ուսման գրողների ձեռքում։ Գուցէ այդ է պատճառը, որ նրանց մէջ նկատելի են մի տեսակ մեծամտութիւն, օլիմպիական վերաբերմունք և այլն, որը երևում է պ. Շիրվանզադէի յօդուածից։ Վերջինը՝ փոխանակ լրջօրէն հերքելու իր գրուածքի մասին մի համեստ կարծիք, հարկաւոր բացատրութիւններ և պատճառաբանութիւններ բերելով, աններելի անհամբերատարութիւն է ցոյց տալիս դէպի այն անձինք, որոնք յանդգնել են յայտնել իրանց ստացած տպաւորութիւնները հեղինակի դրամայից։

Եթէ բժիշկները, իրաւաբանները, ինժեներները, գիւղատնտեսները և այլք չը պիտի վստահանան մի որևիցէ քննադատութիւն անելու, ուրեմն և պիտի պահանջել ամենայն իրաւամբ, որ այն անհատները, որոնք զուրկ են լուրջ պատրաստութիւնից և գիտական զարգացումից, հեռու մնան գրականական պատասխանատու ասպարէզից։ Շատ ցաւալի է, որ մեզ մօտ չը կան քննադատներ՝ բառիս ընդարձակ մտքով՝ և այդ պատճառով մեր գրողների աշխատութիւնները չեն ենթարկվել լուրջ քննադատութեան։ Առաջին փորձերը այդ դժուար ասպարէզում արել են պ. Լէօն, այժմ Լ. Մանուէլեանը և մեծ ապագայ խոստացող Եղիշէ Մադաթեանը, որը հոգեկան հիւանդութիւն է ստացել։

Առհասարակ պիտի ասած, որ լաւ քննադատներ շատ սակաւ են երևում կեանքում ամեն տեղ։ Ռուսաստանում Բելինսկիից, Դօբրօլիւբօվից, Պիսարևից, Միխայլօվսկիից և նորերս վախճանված Սկաբիչևսկիից յետոյ չէ երևում ցայժմ մէկը, որ փոխարինէր նրանց. իսկ Եւրօպայում Տէնի և Բրանդէսի նման քննադատներ չեն երևում գրականութեան մէջ. իսկ գրողներ գեղարուեստական ուղղութեամբ՝ անթիւ, անհամար։

Մենք ոչ մեծ գրողներ ունենք և ոչ էլ մեծ քննադատներ. ապա ուրեմն իրաւունք չունենք թէ անտեղի մեծամտութիւն և թէ անախորժ չը-տեսութիւն (պարվենիւութիւն) ցոյց տալ. մեզ վայել է լինել համեստ, համբերատար, աշխատել սովորել և անդադար սովորել մեզնից անհամեմատ բարձր կուլտուրայի վրա կանգնած ազգերից և նամանաւանդ համեստ լինել։

Շատ յարմար է այստեղ բերել ընդհանրացած ժողովրդական զրոյցը Լօզմանի մասին, որ համարվում էր իմացող ամեն բան. նա պատմել էր, թէ շատ բան գիտէ. պատճառը նա է, որ միշտ սովորում է և չէ արհամարհում ոչ ոքի կարծիքը լսել և իւրացնել։

Հռչակաւոր բնախօս Պաւլօվը իր դասախօսութեան ժամանակ, որին ես ներկայ եմ եղել երկու տարի սրանից առաջ, միշտ սովորութիւն ունի դիմել ուսանողներին, որ նրանք՝ ինչ որ մութ է՝ հարցնեն նրանից։ Ուսանողներից մինը մէկ հարցի առիթով տուեց մի պարզաբանութիւն, որը այնքան դուր եկաւ նրան, որ բացագանչեց. «Այդ ինձ համար նոր է և շատ ընդունելի»։ Այդ համեստութիւնը ցոյց է տալիս մի գիտնական, որը արժանացել է Նօբէլի պրեմիային իր հռչակաւոր աշխատութիւնների համար։

Եթէ վերցնենք ռուսաց ամենամեծ գրող Տօլստօյին, որը համաշխարհային հանճար է համարվում, կը տեսնենք նրա մէջ զարմանալի համեստութիւն իր հռչակաւոր գրուածքների մասին, որոնց նա համարում է աննշան, իսկ յայտնի գրականագէտ Овсяниковъ-Куликовскій*) գրում է, որ Տօլստօյի աշխատութիւնը ոչ թէ աննշան է, այլ հանճարեղ և մեծ։ Եթէ հետևենք Շիրվանզադէի տրամաբանութեանը գրողների առիթով, այն ժամանակ բժիշկներ Զօլա, Նորդաու, ունենայ ուրիշ զգացմունք դէպի նօվատորները, մանաւանդ եթէ աչքի առաջ ունենանք, որ հեւորները զօռով չեն տեղաւորվել այնտեղ, այլ կամ կապալով են օգտվում, կամ թէ չէ՝ գնել սեփականացրել են իրանց ցանած տեղերը։ Շիրին

---

*) «Ռուսահայ գրականութեան պատմութիւն», 1911 թ.։

*) Овсяниковъ-Куликовскій, «Л. Толстой къ 80-ти лѣтію великаго писателя». 1908.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Թիֆլիսի այս տարվայ քաղաքային ընտրութիւնների համար քաղաքը բաժանվելու է ոչ երեք ընտրողական շրջանների, այլ աւելի, ի նկատի ունենալով քաղաքի մասերի պատմական-ազգագրական բնոյթը. այսպէս՝ առանձին ընտրողական շրջաններ են կազմելու Հաւլաբարը, Վէրան, Դիդուբէն, Վակէն, Սօլօլակը, Կուկիան և այլն։ Անշուշտ այս ծրագիրը գոհութիւն կը պատճառէ քաղաքիս դումայի աւելի դեմօկրատիկական ցանկացողներին, քանի որ նախկին ընտրութիւններում անցնում էին հարուստ սօլօլակցիները։

◆ Կովկասի Փոխարքան թոյլ տուեց Թիֆլիսի Թանգյեան եկեղեցու ծխական հոգաբարձութեանը 5,000 րուբլի փոխարինաբար ձեռք բերել որևէ բանկում եկեղեցու անշարժ կայքերի գրաւականով՝ եկեղեցական կրպակների հիմնական վերանորոգութեան համար։

◆ Թիֆլիսի կալուածատիրուհի կին-բժիշկ Ե. Սագարդա-Պասերբսկայան դիմել է երկրագործութեան գլխաւոր վարչութեան Կովկասի լիազօր Արխիպօվին, խնդրելով թոյլ տալ իրան իր կալուածքում, որ գտնվում է Թիֆլիսի մօտերը, Նաւթլուղի ետևում, հիմնել գիւղատնտեսական ընթերցումներ կանանց համար, օգտվելով այդ ընթերցումների համար Արխիպօվի անօրէնութեան ներքոյ գտնվող կաթնատնտեսութեան ինվենտարից։ Յիշեալ դասընթացները մտադրութիւն կայ բանալ այս տարվայ ապրիլին և դասախօսելու համար տիկինը հրաւիրելու է Ալ. Քալանթարին, Ա. Թամամշեանին, Բ. Բաղրամեանին և Ա. Դրբօգլավին։

◆ Կովկասի Փոխարքային ներկայացաւ քաղաքագլուխ Խատիսեան և զեկուցեց քաղաքի հերթական գործերի մասին։

◆ Այսօր Թիֆլիսի հասարակական կլուբում, երեկ. ժամը 8-ին, նշանակված է ինժ. իշխան Անդրոնիկովի՝ Կախէթի երկաթուղու մասին կարդացած ռեֆերատի առիթով սկսված վիճաբանութիւնների շարունակութիւնը։ Ապա կը կայանայ գրական երաժշտական բաժին։ Հիւրերը վճարում են 20 կոպէկ։

◆ Կովկասեան Կայսերական Բժշկական Ընկերութեան շինութեան մէջ տեղի կունենան հետևեալ ընթերցանութիւնները. այսօր, ժամը 4—5, երեխաների համար տ. Ֆլօրա Վարդանեան կը կարդայ «Թէյը և նրա օգուտը»։ Վաղը՝ կիրակի տ. Գոնիեվան վրացերէն, ժ. 11—12, կը դասախօսէ «Մի օր հռոմէական կրկէսում»։ Հասակաւորների համար բժ. Մեհրաբեանը ռուսերէն կը դասախօսէ Թոքախտի մասին։

◆ Պետական խնայողական կասսաների հաշւից երևում է, որ առ 1-ն փետրվարի 1911 թ. պետական խնայողական կասսաներին պահ տրված գումարի չափը հաւասար է 1,363 միլիոն րուբլու։ Դեռ այս գումարի մէջ չէ մտնում պահ տրված դրամների անցեալ տարվայ հաշւած տոկոսիքը։ Ինչպէս յայտնի է, ներկայումս մի օրինագիծ է մշակվում, որպէսզի խնայողական կասսաների այս միլիարդաւոր գումարից գէթ մի քանի տասնեակ միլիոն րուբլի յանձնվի, ի հարկէ տոկոսով, մանր վարկի զարգացման գործին։

◆ Թիֆլիսի ժողովարանի աւագների խորհուրդը առևտրական բանկին յանձնեց այն 1,000 րուբլին, որ ժողովարանի կողմից յատկացվում է Թիֆլիսի ապագայ համալսարանի համար։ Եթէ համալսարանի գործը գլուխ չը գայ, այդ փողերը վերադարձվելու են կրկին ժողովարանին։ Այսպիսի պայմանի նկատմամբ «Кав.» օրաթերթը նկատում է. «Ի հարկէ նախատեսութեան այդօրինակ եղանակը առաջ չի մղի և ոչ մի քայլով համալսարանի հաստատութիւնը»։

◆ Քաղաքային վարչութիւնը առաջարկել է քաղաքային բոլոր ճարտարապետներին խիստ հսկողութիւն ունենալ նոր շինվող տների վրա և թոյլ չը տալ բնակվել՝ քանի դեռ այդ տները չեն քննել տեխնիքական մասնաժողովը և հրդեհաշէջների ներկայացուցիչները։

◆ Թիֆլիսի նահանգապետը հաստատեց «Թիֆլիսի առևտրական բօրսային արտէլի» կանօնադրութիւնը։

◆ Այսօր Արքունական թատրոնում երգչուհի Աւգուստինովիչը իր բենեֆիսին դրել է «Գէյշա» օպերան, որի վերջում արտիստները կը կազմեն կաբարէ։

◆ Այսօր Զուբալովեան Տանը «Ուրիէլ Ակօստա» պիէսի մէջ հանդէս է գալու նաև դերասան Զարիֆեանը։

◆ Վրաց «Սաքմէ» թերթի աշխատակից Տ. Տուրմանիձէն գեներալ նահանգապետի կարգադրութեամբ աքսորվում է Աստրախանի նահանգը 5 տարով։

◆ Խարբինում տեղական վրաց գաղութը յունվարի 14-ին կազմակերպել է վրացական երեկոյթ։

◆ «Р. Знамя»-ն շարունակում է խիստ յօդուածներ տպել կովկասեան ուսումնական շրջանի հոգաբարձու Ռուդոլֆի դէմ, մեղադրելով նրան տեղացի ազգերին անբարոյականացնելու մէջ և պահանջելով փրկել ռուս երեխաներին։

◆ Գուրիայում շարունակվում է ձիւն գալ։ Երևացել են տարափոխիկ հիւանդութիւններ. ուտելեղէնը չափազանց թանգացել է. անասունները ոչնչանում են կերի պակասութեան պատճառով։ Ընդհանրապէս օգնութիւնը անհրաժեշտ է։ («З. Р.»)

◆ Թիֆլիսի բանտից ազատվեց 3,000 րուբլի գրաւականով Նիկողայոս Մատինեանը, որ մեղադրվում էր «Դաշնակցութիւն» կուսակցութեանը պատկանելու մէջ։

◆ Այսուհետև, նահանգապետի առաջարկութեան համաձայն, ոստիկանական նոր պաշտօնեաներ ընդունելու ժամանակ թեկնածուներին պէտք է ենթարկել նախնական քննութեան։ Քննիչ մասնաժողովի մէջ մտնում են դատախազի և արքունական պալատի ներկայացուցիչները։

◆ Շուշից մեր թղթակիցը հաղորդում է, որ քաղաքում սաստիկ տարածված է տիֆը և շատ զոհեր է տանում։ Տեղական բանտում այնքան հիւանդներ կան, որ այլ ևս բանտարկվածներին չեն բերում դատարան քննութեան, որպէսզի հիւանդութիւնը չը փոխվի ուրիշներին։ Ջրանցքը տակաւին սառած է. չունեւոր դասը խմում է ջրհորների ջուր։ Նորերս «Բաղունց հորեր» ասված թաղի ջրհորներից մէկում գտել են մարդկային մարմնի մասնիկներ՝ հետևանք հայ-թուրքական կոտորածի։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Փետրվարի 10-ին Վրաց թատրոնում խաղացվեց Շիլլէրի «Աւազակներ» պիէսը, մասնակցութեամբ յայտնի դերասան Վլ. Ալէքսիեվ-Մեսխիշվիլիի, որը կատարեց Ֆրանց Մօօրի դերը։

◆ Փետրվարի 12-ին Վրաց թատրոնում կը կայանայ հերթական գրական-երաժշտական երեկոյթ-ներկայացումը, ղեկավարութեամբ Դրամ. Ընկ. վարչութեան անդամ Ա. Շիխինովի։ Երեկոյթը խոստանում է լինել հետաքրքրական։ Մասնակցելու են Michel d'Arial, երգ.-հաւատ. Գր. Դիասամիձէ, տաղանդաւոր կատակերգու Վ. Աբաշիձէ, դերասաններ Վ. Ալէքսիեվ-Մեսխիշվիլի, Կ. Մեսխի և այլք։ Ռեժիսեօր Վ. Շալիկաշվիլիի ղեկավարութեամբ կը դրվեն կենդանի պատկերներ, որոնց նիւթ կը ծառայեն տասնևիններորդ դարի բանաստեղծները։ Երկրորդ մասը բաղկացած կը լինի գրական-երաժշտական բաժնից, իսկ երրորդ բաժնում կը խաղացվի Գ. Էրիսթավի «Վէճ» կոմեդիան։

◆ Կիրակի, ամսիս 13-ին, վրաց բեմի վրա առաջին անգամ կը խաղացվի «Բերդի գաղտնիք» պիէսը, որը փոխադրել է Վ. Գունիան։ Դէպքը տեղի է ունենում վրաց Էրէկլէ արքայի ժամանակներում։ Հետևեալ ներկայացմանը տեղի կունենայ տաղանդաւոր դերասան բեժիսեօր Վ. Շալիկաշվիլիի բենեֆիսը. խաղացվելու է նոր ինքնուրոյն պիէս Շալվա Դադիանի՝ «Ապաշխարութեան ապարանք»։

◆ Վրաց թերթերին գրում են Իւրիևից, որ այնտեղ փետրվարի 12-ին տեղի պիտի ունենար վրացի ուսանողների ութերորդ երեկոյթը, վրացի չքաւոր ուսանողների օգտին։

◆ Փետրվարի 7-ին, Քութայիսում, յօգուտ Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկերութեան տեղական ճիւղի, կայացել է երեկոյթ, որին ներկայ է գտնվել մեծ թւով հասարակութիւն։

◆ Վրաց ազգային մուզէում հիմնելու մտադրութիւնը լուծումն է ստացել դրական մտքով։ Ներկայիս յատուկ մասնաժողովը պտրում է յարմարաւոր շէնք։

◆ Թիֆլիսի նահանգապետը հաստատել է «Մօմավալի» (Ապագայ) կօօպերատիվ ընկ. կանօնադրութիւնը։ Այս օրերս տեղի կունենայ ընկ. անդամների ընդհանուր ժողովը, վարչութեան անդամներ ընտրելու համար։

◆ Երեքշաբթի, ամսիս 15-ին տեղի կունենայ Մ. Կավսաձէի նորակազմ երգեցիկ խմբի երեկոյթ-համերգը, ընդարձակ ծրագրով։

◆ Քութայիսի քաղաքագլխութեան պաշտօնի համար տրվում են Ի. Ձիքօվանիի և Կ. Ձիքվաիձէի անունները։

◆ Թիֆլիսի գաւառի Խաշմի գիւղում հիմնվում է մանր վարկի ընկերութիւն, որի համար պետական բանկի բաժանմունքը յատկացրել է 1000 րուբլի։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆՆ ԵՒ ՄԱՏԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ*)

(Նամակ խմբագրութեան)

Մի րոպէ իսկ երևակայել չէի կարող, թէ մարդու մէջ այսչափ մեծ քանակութեամբ մաղձ կարող էր ամբարված լինել։ Եւ եթէ մեր պատուելի սինօդի անդամին, որ այսօր հայոց Հայրապետի պատիւն է պաշտպանում, իսկ երկու տարի առաջ չը վարանեց, տեղապահութեան օրով, անխղճօրէն կոխկրտելով ընտրեալ Հայրապետի իրաւունքները սինօդ մտնել,—մամուլի էջերում այսչափ անզուսպ կիրք ու անզուսպ բերան է բանում, կարող եմ երևակայել, թէ քանի՛ անգամ նրա դէմքի գոյնը կը փոխվի, երբ Էջմիածնում կը հանդիպէ Կարապետ եպիսկոպոսին, որի գոյութիւնն այնտեղ այնքան ցանկանում է նա։

Սակայն տեսնենք որչափ ճշմարիտ է մեր հայր-սուրբն, որին հանգիստ չեն տալիս Կարապետ եպ.-ի դափնիներն և որոնց պոկելու համար՝ նրա ձեռքերը չափազանց կարճ են։

Նախ և առաջ՝ պնդում է նա և «ստախօս» անուանում Կարապետ եպ.-ին այն պատճառով, որ նա իր հրաժարականի մէջ ասել է, թէ «Կաթողիկոսն անբարեհաճ է եղել միշտ դէպի ինքը», իսկ մի տող յետոյ պատուելի հայրը գրում է՝ «թէև շատ էլ արևով չէր խնդում»։ մի քիչ յետոյ, խպառ մոռանալով իր դատավճիռը, կցում է՝ «իսկ թէ ինչո՞ւ հանգուցեալ Կաթողիկոսը վերջերս անբարեհաճ էր դէպի Կարապետ եպ.-ը»...—ուրեմն անբարեհաճ էր։ Թէ ո՛վ է սուտ խօսում, թող ընթերցողը դատէ. բայց մենք սա «ստախօսութիւն» չենք կոչի, այլ թէ՝ տրամաբանելու այս ձևը մի փոքր ծուռն է։

Երկրորդ՝ Կարապետ եպ.-ի և Վեհի միջև ինչ խօսակցութիւն է տեղի ունեցել, այդ արձանագրել է սրբազանը իր հրաժարականի մէջ, բայց որը, ըստ Մատթէոս վ.-ի, բոլորը չէ, և վերջինս բերում է, իբրև թէ, այն խօսակցութիւնը, որ եղել է Կարապետ եպ.-ի և Վեհի միջև։ Ոչ ոքից ծածուկ չէ, թէ այդ խօսակցութեան ժամանակ, որ կայացել է միայն Հայրապետի ներկայութեամբ՝ սենեակում բացի երկուսից ոչ ոք չէ գտնվել. հետաքրքրական է գիտենալ, թէ Մատթէոս վ.-ը ո՛րտեղից է իմացել խօսակցութեան մանրամասնութիւնը. թէ՞ գուցէ վեհարանի պատերը վերջերս մի հրաշքով ականջներ էին առել։ Ինչ կամենում է՝ թող հայր սուրբն առարկէ, սակայն թող խոստովանվի, որ եթէ դռների ծակից նրանց խօսակցութիւնը լսողներ եղել են, այդպիսի երևոյթներ յամենայն դէպս տեղի չեն ունենում վեհարաններում...

Այս սիստեմից, ինչպէս երևում է, վերջերս խորշելիս չեն եղել մեր հոգևոր հայրերը։ Ի՞նչ ցանկանում էք՝ ասէք, մաքուր ճանապարհ չէ հալածել մարդուն այն փաստերի հիմամբ, որոնք հաստատված չեն ամենևին։ Դժբաղդաբար այս նոր չէ Էջմիածնում, և Մատթէոս հայր-սուրբն ի զուր տեղն է պնդում, թէ Կարապետ եպ.-ին ոչ ոք Էջմիածնում չէ հալածել. իսկ մենք, որպէս ականատես, կասենք, որ նրան, սակաւ բացառութեամբ, նրա տեսչութեան օրով հալածում էր ամբողջ միաբանութիւնը, սկսած հանգ. Հայրիկից, որը չէր վարանում վանեցի ուսանողներին կանչել վեհարան, նրանց ձեռքը դրամ գնել ու ասել. «Զաւակս, Կարապետ վ.-ից հեռու կաց. վեհարանի մասին (իմ իր մասին) բան մը գրել չէս կրնար. գրէ»։ Մի այլ օրինակ. Յուսիկ արքեպիսկոպոսն և Մելիք-Թանգեան վ.-ը երբ Գէորգեան ճեմարանում ներկայ եղան մեր «մեկնաբանութեան» քննութեանը, դուրս գալուց յետոյ միմեանց ասում են՝ «ազատամիտներ մենք ենք հաշւում, բայց Կարապետ վարդ.-ը մեզնից առաջ անցաւ. նա անաստուածութիւն է սովորեցնում աշակերտութեանը», և յայտնվեց այդ մասին «ում անկ է» (այսինքն Կաթողիկոսին). (տես «Լումայ» 1903 թ.)։ Նրան հալածում էր հանգուցեալ եպիսկոպոսներից մէկը, որպէս վանական կառավարութեան նախագահ միշտ հակառակելով նրա կարգադրութիւններին, ճեմարանը շաբաթներով լոբիով էր կերակրում, որով աշակերտութեան մէջ դժգոհութիւն էր առաջ գալիս դէպի վարչութիւնը։ Վերջապէս չենք տալիս այն եպիսկոպոսների անունները, որոնք ճեմարանի վատ աշակերտներին տեղ էին տալիս իրանց սենեակում ու վեհափառի միջոցով ճնշում գործ դնում Կարապետ վարդ.-ի վրա, որ սա ի կատար չածէ մանկավարժական խորհրդի վճիռները, կամ որոնք գալիս էին ճեմարանի բակը և աշակերտութեան ներկայութեամբ ծաղրում տեսչին։ Նոյն Կարապետ վարդ.-ի դէմ էր գործում նաև վեհարանական կամարիլլիան յանձին Կորիւն վարդ.-ի, այն ժամանակ դիւանապետ, որի հետ այնչափ սիրալիր յարաբերութեան մէջ էր հայր Մատթէոսը։ «Ասա, ով է ընկերդ, կասեմ ով ես դու»։ Այս ծայրը կարելի էր աւելի երկարացնել, բայց լաւ է՝ լռենք։ Ահա թէ ինչ էր տանում Էջմիածնում սև նախանձն ու հայկական չըկամութիւնը. ինչպէս կարող էին լեզուները կարկամել, քանի որ երեկվայ մի ջահել վարդապետ այդչափ շնորհքով պաշտօններ էր վարում, պաշտօններ, որոնք մինչև նա՝ եպիսկոպոսների ձեռքին էին գտնվում։

Բայց մենք անցնենք միւս հարցերին. Մատթէոս վարդ.-ը պնդում է, թէ Կարապետ եպիսկոպոսն Ատրպատականի թեմակալութիւնն ընդունել է, որպէսզի եպիսկոպոս դառնայ (ընթերցողը չը մոռանայ, որ նրա առաջնորդ ընտրվելու ժամանակ կաթողիկոսը վախճանված էր, և մենք նախ մի նամակի հիման վրա կարող էինք ապացուցանել, որ նա պատրաստ էր Ալէքսանդրօպոլ էլ երթալ, այն աստիճան զզվեցրել էին Էջմիածնում), իսկ յետոյ միշտ ձգտել է աւելի լաւ տեղեր ձեռք բերել։ Սա դարձեալ ոստիկանական պրիօմ է՝ զբաղվել մարդկային հոգու խուզարկութեամբ. և ի զուր տեղն է հայր-սուրբն այդ սայթաքին հողի վրա ոտք կոխել, որովհետև եթէ մտնենք այն հարցերի մէջ, թէ ինչու են բարեկամանում Մատթէոս և Կորիւն վարդապետները, ինչպէս է, որ հայր Մատթէոսը տէր տեղապահի յանձնարարականներն է կատարում այժմ, և այլն—շատ հեռու կը տանեն. խոհեմութիւնը պահանջում է, որ գոնէ այս դէպքում հայր-սուրբը լռելն ոսկի ճանաչէ։ Այս նախ՝ և երկրորդ՝ եթէ Կարապետ եպ.-ը ձգտել է Թիֆլիսի կամ Շուշու թեմին, է՛հ, ի՛նչ յանցանք կայ այստեղ։ Փառք Աստուծոյ, հօ ընտրութեամբ պիտի լինէր այդ և ոչ քսութեամբ ու շողոքորթութեամբ, ինչպէս մինչ այդ եղել էր. ինչո՞ւ այդչափ տագնապի մէջ էր յարգելի հայրը։ Եթէ անյատակ տգէտները, գօշաքաղները, սուտակապաշտները և մտաւոր գաճաճները կարող էին պաշտօնների ձգտել ու ձեռք բերել նրանց միայն շնորհիւ իրանց սողալու գերազանց յատկութեան, ինչ պակասութիւն է, եթէ ամեն տեղ իր կանդիդատուրան դնէր Կարապետ եպիսկ.-ը, որն իր ամբողջ ուսերով բարձր է Էջմիածնի միաբանութիւնից։

Մատթէոս վարդապետը չէ վարանում Կարապետ եպիսկոպոսի գրական, մանկավարժական և քարոզչական գործունէութիւնը Չ-ով որակել. թող թոյլ տայ պատուելի վարդապետը մեզ ասելու, թէ այստեղ նա դիտմամբ գոցել է իր աչքերը։ Կարապետ եպիսկոպոսի թշնամիներն էլ կը խոստովանվեն, որ նա օժտված է մանկավարժական արտակարգ ձիրքով և լայն համբերող ոգով, որ նրա աստուածաբանութեան դասերն աւելի հետաքրքրական էին դասախօսվում, քան որևէ առարկայ ճեմարանում։ Իսկ նրա գրական վաստակներից հէնց բաւ է յիշել նրա «Հայոց եկեղեցւոյ պատմութիւնը», որի մասին հիացքով են խօսել պրոֆ. Գր. Խալաթեան, Կ. Կուսիկեան և Ք. Յովհաննիսեան, որոնք այդ հարցում յամենայն դէպս աւելի կոմպետենտ են։ Թէ նա ո՛ր աստիճան լուրջ գիտնական պաշար և հմտութիւն ունի, դա կարող են վկայել նրա նախկին աշակերտներն ու Մոսկվայում գտնված այն հայ ուսանողները, նրա՝ Բագուի գիմնազիոնի նախկին աշակերտները, որոնք մինչև այսօր հիացքով են խօսում նրա մասին, որին հեղինակութիւն է ճանաչել ոչ միայն աշակերտութիւնն, այլ և Բագուի գիմնազիայի ուսուցչական խումբը. «Ես զարմանում եմ, ասել էր գիմնազիայի դիրեկտորը, որ այսպիսի խելօք ու խոշոր պատրաստութիւն ունեցող անձը հոգևորականի սքեմ է հագել»։

Գալով այն հարցին, թէ «Կարապետ եպիսկ. աշխատել է Էջմիածնից դուրս գնալ այն ժամանակ, երբ ներսի դրամական հաշիւների հետ կապ ունեցող պաշտօններն ուրիշների ձեռքումն են եղել»... պէտք է ցաւօք սրտի ասել, որ սա անբարեխղճութիւն է, և այս տողերը գրելիս Մատթէոս վարդ. խիղճը մի կողմն է դրել, քանի որ դրամով վարձատրվող այն պաշտօնները, որոնք գտնվում են այժմ Մատթէոս վ.-ի և մի քանի կօլեգաների ձեռքին՝ մի ժամանակ Կարապետ եպ.-ի ձեռքին էին և առանց որևէ վարձատրութեան։ 1894 թւից նա եղել է Գէորգեան ճեմարանի աստուածաբանութեան ուսուցիչ շաբաթական մօտ 20 դասով—1,500 ր., ճեմարանի տեսչի օգնական—1,200 ր., ապա 3 տարի տեսուչ—3,000 ր., «Արարատի» խմբագիր—400 ր., այս ամենի համար նա մինչև 1900 թ. ստացել է ոչ մի կոպէկ, այլ միայն իր միաբանական ռոճիկը՝ ամիսը 25 ր., և այդ՝ այն ժամանակ, երբ յաջորդութիւնները վարում էին հոգեկան հիւանդները, երբ Բագուի պէս «չաղ» տեղերում բազմած էին Մատթէոս վարդապետները։ Միայն 1900 թ. 5,000—3,000 ր. ծառայութեան համար հանգուցեալ Հայրիկը համաձայնվեց ճեմարանում ուսուցչութիւն անող վարդապետներին աւելցնել—300 ր., իսկ Կարապետ վ.-ին նաև տեսչութեան համար—100 ր., և նա ստանում էր տարեկան 700 ր. միաբանական ռոճկի հետ միասին։ Եւ չէ քաշվում հայր-սուրբը, որ տարիներ շարունակ ստացել է 1,200 ր. ռոճիկ միայն թղթեր ստորագրելու համար, քարը փոխանակ իր վրա ձգելու՝ ուրիշի վրա ձգել։

Իսկ այն խնդիրը թէ վարչական մարդ է նա թէ ոչ, յամենայն դէպս այն մաշտաբով, որով մօտենում է Մատթէոս վ.-ը, ուղիղ դատել կարելի չէ։ Պէտք է խոստովանվել, որ Կարապետ եպ.-ը վարչագէտ չէ ոստիկանական մտքով. նա խիղճը ի վաճառ հանած անձն չէ, որ ջարդէ, փշրէ ու ոչնչացնէ, միայն թէ իր հրամաններն ու կապրիզները կատարվեն, նա խոհեմ, խղճով, զգացմունքով և շրջահայեաց մարդ է, միշտ պատրաստ ընդունել իր սխալները, դիմացինի, թէկուզ մի աշակերտի մէջ յարգել անհատականութիւնը և մարդը. և թէ որքան նա «վարչագէտ չէ»՝ ցոյց է տալիս այն պերճախօս փաստը, որ նա իր 3-ամեայ տեսչութեան ընթացքում՝ բացի մէկից (այն էլ հակառակ իր ցանկութեան) ոչ մի աշակերտ չարձակեց, չը նայելով գործող պրովօկացիային. ոչ մի աշակերտական աղմուկ տեղի չունեցաւ Գէորգեան ճեմարանում և նրա օրով ուսուցչական կազմն աւելի լաւ ոյժերից էր բաղկացած, քան վերջին տարիները. և ճեմարանից, Մատթէոս վ.-ի գոված վարչագէտ տեսուչների շնորհիւ, բաւական աջողութեամբ աշակերտներ են փողոց նետվում վերջին տարիները և աւելի մեծ թւով, քան «անվարչական» Կարապետի օրով, որովհետև վերջինս միշտ ի նկատի ունէր ճեմարանի պատիւն և աշակերտութեան շահը, և ոչ թէ իր անձնական տաքուկ պաշտօնը. նա քանիցս պատրաստակամութիւն է յայտնել թողնել տեսչութիւնը, միայն թէ չը տուժէ աշակերտութիւնը։

Իսկ թէ որքան զաւեշտական են Կարապետ եպ.-ի ծրագիրները, որ իբրև թէ ցայսօր ոչինչ չէ արել իր թեմում—սա այն աստիճան ճշմարտութիւնից հեռու է, որ խղճալի Մատթէոս վ.-ն է ընկնում ծիծաղելի կացութեան մէջ և մարդ ցաւում է, որ մեր սինօդի անդամին կիրքն այն աստիճան կուրացրել է, որ հայկական Իլիոդորի պաշտօնն է ստանձնել նա, որպէսզի իր հակառակորդին տապալէ։ Հայր սուրբը գրում է, թէ Կարապետ եպ. իր 3-ամեայ առաջնորդութեան ընթացքում ոչինչ չէ արել, թէ նա իւրացրել է Եղիշէ վ.-ի ծրագիրն և այլն և թէ ոչ մի յարգանք չէ վայելում պարսիկ ու ռուս կառավարութիւններից։ Որպէսզի յարգելի հայր սուրբը զգայ, թէ որչափ ինքը դաւաճանել է ճշմարտութեանը, շնորհիւ մուրացածոյ տեղեկութիւնների, ես կը բերեմ Ատրպատականի թեմական ժողովի գրութիւնը հանգ. Վեհափառին. «Նկատի առնելով գեր. սրբազանի 3 տարվայ անխոնջ աշխատանքները թեմիս բարոյական, մտաւոր եւ տնտեսական բազմապիսի կարիքները լրացնելու համար. նկատի ունենալով նաև, որ սրբազանի ձեռնարկած մի կարգ [illegible] գործերը թերի են մնացել և նրանց կատարումը սերտ կերպով կապւած է սրբազանի անձնաւորութեան հետ... խնդրում ենք չընդունել նորին Սրբութեան հրաժարականը և ձեր Սրբութեան օրհնութեամբ և շնորհակալութեամբ վերադարձնել իր թեմի ղեկավարութեան՝ իր արդիւնաւոր գործունէութիւնը [illegible] գով» («Մշակ» № 287)։

Թէ նա որչափ էր յարգված բոլոր պետութիւնների ներկայացուցիչներից, բերել փաստ կարող եմ [illegible] վկայութիւնը, որ [illegible] ասել էր. «Կարապետ եպիսկ. Պարսկաստանում հայոց թագաւորի պատիւ է վայելում»։ Իսկ թէ որչափ յարգված էր նա ռուս և պարսիկ պետութիւններից և ժողովրդից, թող ասեն այն [illegible], որ լոյս տեսան «Մշակում» Կարապետ եպ.-ի մուտքը [illegible] ձեռնադրութեան յետոյ, որ մի յաղթական մուտք էր [illegible] ու կառավարութեան [illegible] պետութեան [illegible] ժողովրդական [illegible] կել էր [illegible] շնորհա[illegible]

Գալով «դրամներ իւրացնելու, զեղծումների» բաներին, [illegible]

Չէխով, Վերեսաև, Եսլպատևսկի, Ա. Խատիսեան և այլք, կամ իրաւաբաններ՝ Կօնի, Սպասովիչ, Ջանշեան և այլք, իսկ մեզ մօտ՝ Տ. Յովհաննիսեան, Ս. Յարութիւնեան, Յ. Սպենդիարեան, Զալխուշեան եայլք կամ գիւղատնտեսներ՝ Քալանթար, Ս. Աթանասեան և այլք՝ չը պիտի համարձակվեն գրիչ վերցնել և որևիցէ հասարակական, գեղարուեստական, սօցիալական և այլ հարցերի մասին մի որևիցէ կարծիք յայտնել։ Ահա ուր է տանում պ. Շիրվանզադէի տարօրինակ տրամաբանութիւնը իր յօդուածում, յիշված այն մասնագէտների մասին, որոնց կամենում է կանգնեցնել յետադայ՝ ի՛սկ որ վանդալական խօսքերով. «Կանգ առէք, վանդալներ, ճանաչեցէք ձեր չափը». բայց այդ խօսքերը, ինչպէս իրաւամբ գրում է Կար-Միրը «Մշակի» 24-դ №-ում, կարելի է ուղղել շատ և շատ գրողների, որոնք ըստ իրանց զարգացման և անպատրաստութեան՝ դիլէտանտիզմի, չը պիտի մասնակցեն գրականական ասպարէզում։

Քանի որ ոչ մեր գրողներն են մեծ և ոչ նրանց քննադատները, ուստի և ներողամիտ լինենք դէպի միմեանց, թոյլ չը տանք մեզ լինել մեծամիտ, ամբարտաւան, անխաղական, եթէ չենք կամենում ծաղրի առարկայ դառնալ։ Եթէ կուլտուրական ազգերի իմաստալի առածները բաւական չեն մեզ սովորեցնելու համեստութիւն, յիշենք մեր շատ յարգի ժողովրդական առածը՝ «պտղատու ծառը գլուխը քաշ կը պահէ»։ Շատ ուրախալի է, որ «Արմենուհին» առիթ է դառել մտքերի փոխանակութեան, բայց դժբաղդաբար ոչ այն մտքով, որը ցանկալի է՝ թէ հեղինակի և թէ մեր հասարակութեան համար։ Մեր ցանկացածն է, որ լինի քննադատութիւն, ըստ էութեան՝ օբյեկտիվ և անաչառ կերպով, կրկնում ենք, մեզնից աւելի ձեռնհաս քննադատների միջոցով։ Խոստովանում ենք միանգամայն անկեղծօրէն, որ եթէ ապացուցվի, թէ մենք շատ սխալ ենք ըմբռնել «Արմենուհու» միտքը և սխալ քննադատել, այն ժամանակ միայն ուրախ կարող ենք լինել, համոզվելով որ պ. Շիրվանզադէն, իբրև հայ գրող, աւելի ևս մեծ համբաւ պիտի ունենայ մեր աղքատ գրականութեան մէջ իր վերջին դրամայով ևս։

Այդ արդէն կը լինէր բաւականութիւն մեր ազգասիրական զգացմունքին, որին՝ ամենայն պատրաստակամութեամբ՝ պատրաստ ենք զոհել մեր անձական ինքնասիրութիւնը։

Բժ. Բ. Աղասարեան

Ղարաքիլիսա, 6 փետրվ.

---

*) Տես «Մշակ» № 12.

վայր և վերայ բարդում է Մատթէոս վ.-ը օգտվելով այն դրութիւնից, որ Կարապետ եպ.-ն իրան դատ չի ենթարկի, յարգելով մամուլի ազատութիւնը· այլապէս նման մեղադրանքները մարդիկ բանտերումն են քաւում։

Զափազանց ցաւալի է, որ այժմ Էջմիածնում կրկին սկսվել է կրքերի հրդեհը, որ մթնեցնում է մարդկային ուղեղը մինչ այն աստիճան, որ մարդիկ սպիտակն իսկ սև են տեսնում· և մեր հոգևոր հայրերն, որոնք պիտի խաղաղութիւն քարոզած լինէին, խռովութիւն են սերմանում։ Որչափ ցանկալի էր, որ Մատթէոս վ.-ն իր ոճին զոհ չը դառնար, բայց եղածն եղած է... խաչը դրված է։

Առ-Ջէն

Մոսկվա, 28 յունվարի

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

II

Արդի Պարսկաստանը ընդունա՞կ է կապիտալիստական զարգացման

Ա.

Կապիտալիստական երկիրները, իրանց զարգացած արդիւնաբերութեամբ և դիզած բանկային հարստութեամբ, բազմաղան կերպով են շահագործում տնտեսապէս յետ մնացած, կապիտալով աղքատ երկիրները։ Նախ՝ այդ երկիրները նկատվում են որպէս շուկայ, ուր կարելի է հալեցնել ֆաբրիկատներ, որքան էժան գնանոց, որքան ժողովրդի լայն խաւերի պահանջներին համապատասխանող՝ այնքան լաւ։ Երկրորդ՝ այդ երկիրների համար առաջինները ծառայում են որպէս բանկիրներ, լրացնելով պետական կարիքները, ծածկելով նրանց փոխառութիւնները չաղ տոկոսով և լաւ, ապահով գրաւականներով, որպէսզի չը կրկնվեն Յունաստանի, Թիւրքիայի, Պորտուգալիայի և այլ պետութիւնների սարքած կամ իսկական սնանկութիւնները, ձեռնունայն թողնելով պարտատէր կապիտալիստներին։ Վերջապէս հասնում է ժամանակ, երբ կապիտալիստ երկիրները ստեղծում են հէնց շահագործվող երկիրներում կապիտալիստական ձեռնարկութիւններ, կամ երկրի հողում թաղված հարստութիւնները շահագործելու նպատակով կամ ստեղծելով ֆաբրիկաներ, որ արտադրեն պատրաստի ապրանքներ հէնց նոյն երկրի կարիքների համար։

Տնտեսական կեանքին հետևող ընթերցողները իսկոյն կը յիշեն ասածներիս բազմաթիւ օրինակներ, այնպէս որ աւելորդ է այս սուղ էջերում նրանց մի առ մի թւելը։

Հասել է ժամանակը, երբ եւրոպական կապիտալը զբաղված է այն խնդրով, թէ ո՞րքան ընդունակ է Պարսկաստանը իր ծոցում մուտցել կապիտալիստական տնտեսութիւն, և այդ տեսակէտից հետաքրքրական է այն լրիւ պատմական ակնարկը, որ նորերս զետեղել է «Вѣст. Финансовъ»-ի № 48-ում կովկասցիներին լաւ ծանօթ Սկիֆը։ Սորա մենք կարևոր համարեցինք տալ այդ յօդուածի էական մասերը, մտցնելով հարկ եղած լրացումները։

Դեռ XIX դարի 70-ական թւականներին Րէյտէր յայտնի հեռագրական գործակալութեան հիմնադիրը Նասրէդդին շահից ստացել էր բազմատեսակ կոնցեսիաների իրաւունք· երկաթուղիներ անցկացնելու, հանքեր շահագործելու, գործարաններ հիմնելու, բայց շնորհիւ ռուս կառավարութեան եռանդուն բողոքի՝ շահը ստիպված եղաւ յետ վերցնել բոլոր պայմանագրերը։

Սակայն չը նայած այդ բողոքին, շնորհիւ անգլիական դիպլոմատիայի ջանքերին յետագայում, 1889 թւին, Պարսկաստանում հաստատվեց անգլիական բանկը։

1886 թ. պարսից դրամատան կապալառու հաջի Մահմէդ Հասանը իրաւունք ստացաւ Կասպից ծովի մօտ գտնվող Ամոլից մինչև Մահմեդաբատ երկաթուղի կառուցել։ Ճանապարհը, 18 վերստ, արդէն պատրաստ էր, երբ յայտնի դարձաւ, որ Մահմեդաբատը իբրև նաւահանգիստ անպէտք է, և գործը մեծ վնասներ տալով ձեռնարկողին՝ խափանվեց, չը նայած որ տեխնիքական կողմից նա լաւ էր կազմակերպված։ 1887 թւին կազմվեց բելգիացիների ընկերութիւնը՝ երկաթուղիներ և տրամվայներ կառուցանելու նպատակով, բայց իրականացվեց միայն Թէհրանի տրամվայը, որը և այժմս գործում է։ 1890 թ. Պօլեակօվ ռուս ձեռնարկողը իրաւունք ստացաւ բանկ հիմնել, որը յետոյ անցաւ ռուս գանձարանին (1900 թ.), ստանալով զեղչի և փոխատւութեան բանկի անունը, թէ ինչ արդիւնքով, դա գիտեն մեր ընթերցողները հիւպատոս Պասեկի զեկուցումից (№ 23)։ 1890 թ. մի անգլիական ընկերութիւն ստացաւ ծխախոտի մենավաճառը, որ փակվեց 1892 թւի յայտնի ժողովրդական բողոք-յուզմունքներից յետոյ։ Մօտաւորապէս այդ ժամանակները մեծ վնասներ կրելով փակվեց և մի ուրիշ անգլիական՝ հանքային հարստութիւններ շահագործող ձեռնարկութիւն։ Այնուհետև չորս տարի ի զուր չարչարվելուց յետոյ վերջացաւ և տրանսպորտի անգլիական (փոխադրութեան) մի ընկերութիւն, կորցնելով մօտ $2\frac{1}{2}$ միլիօն րուբլի։ Ութ տարի (1891—99) գոյութիւն ունեցող բելգիական գազային գործարանը փակվեց, կրելով գրեթէ մի միլիօն րուբլի վնաս։ Նոյն անաջողութեանը հանդիպեց և բելգիացիների ապակու գործարանը (1893—1901), բերելով տէրերին կէս միլիօն ֆրանկ վնաս։ Դարձեալ նոյն բելգիացիների 1894 թ. հիմնած շաքարի գործարանը վեց տարուց յետոյ ստիպված եղաւ դադարեցնել իր գործերը՝ 2 միլիօն ֆրանկ վնասով։ Նոյն վախճանին ենթարկվեց և ռուս Պօլեակօվի լուցկու գործարանը, որ, հիմնվելով 1890 թ., տարի ու կէսից յետոյ փակվեց մէկ միլիօն վնասով։ Ֆրանսիական «Թէհրան-Տօկօ» ակցիօներական ընկերութիւնը կարողացաւ դիմանալ 15 տարի, բայց վերջը հեռացաւ ասպարէզից խոշոր վնասով։ Կարճատև գոյութիւնից յետոյ փակվեց և Սուլթանաբատում անգլիացիների հիմնած «պարսկական գորգագործական մանուֆակտուրան»՝ 100,000 րուբլի վնասով։ Նոյնը պատահեց և Բուշիրում հիմնված անգլիական առևտրական ձեռնարկութեանը, որ վնասվեց աւելի քան 200,000 րուբլի։ Ապա դադարեցին մի այլ ընկերութիւն նոյնպէս Բուշիրում և վերջապէս հոլլանդական մի ընկերութիւն, որ Պարսկաստանում գործում էր ամբողջ 30 տարի։

Այս անաջողութեան ենթարկվեցին և այլ աւելի մանր ձեռնարկութիւններ· Թէհրանի բամբակեայ թելի մի պարսկի գործարանը, մի ֆրանսիացու ալիւրի և կաւեղէնի գործարանը, Ֆեշինդում հիմնված քարածխային ձեռնարկութիւնը, Շուշտէրում անգլիացիների ձեռնարկած նաւթային արդիւնաբերութիւնը։ Անշուշտ խրատված այս փորձերից, այն եւրոպացիները, որոնք իրաւունք էին ձեռք բերել աղահանքեր մշակելու գործը և մոմի գործարան հիմնելը, չը սկսեցին նոյն իսկ այդ գործերը։

Աւելի աջող ելք ունեցան մի քանի եւրոպացիների ձեռնարկութիւններ· այսպէս՝ մեծ օգուտներով աշխատում է շվէյցարացի Ցիգլերը, որը ահագին զարկ տուեց տեղական գորգագործութեան· նրա ձեռքի տակ ներկայումս կայ 3,400 բանւոր և գործը շարունակվում է ահա 20 տարի, արտահանելով գորգերը Եւրոպա և Ամերիկա։ Հարստացրեց ռուս Կուսիսին Գիլանի անտառային ձեռնարկութիւնը և Կասպից ծովի պարսկական ջրերի ձկան կապալառութիւնը Լիանօզեանին, որի դիվիդենտները աճում են տարէ-տարի։ Պէտք է յիշել և «Հայաստան» գրքի հեղինակ Լինչի անուան ֆիրմայի տակ շոգենաւային գործը Կարուն գետի ընթացքով, թէև դա ունի ոչ այնքան առևտրական, այլ աւելի քաղաքական նպատակ՝ հարկաւ անգլիացիների համար։

Այդպիսով վերև յիշած ձեռնարկութիւններից ներկայումս գործում են միայն ռուսական և անգլիական բանկերը, բելգիացոց տրամվայը, Լինչի շոգենաւային ընկերութիւնը, անգլիական հեռագրական ձեռնարկութիւնները (քաղաքական նպատակներով), Լիանօզեանի ձկան գործը, Ցիգլերի խոշոր ֆիրման և, եթէ ուզէք, ռուս խճուղին· եւրոպական ձեռնարկութեան ցուցակը պէտք էր լրացնել նաև հետևեալ երկու ռուսական գործերով՝ ճանապարհներ անցկացնող և Էնզելիում նաւահանգիստ կառուցող ընկերութիւններով։

Վերև յիշված՝ Ցիգլերի ձեռնարկութիւնը պէտք է նկատել աւելի կոմիսիօնական առևտրական արտահանութեամբ զբաղվող մի հիմնարկութիւն, քան բուն արդիւնագործական· նա իր օգուտները ստանում է Եւրոպայում և Ամերիկայում, վաճառելով մէկին երկու երեք գնով պարսկական գորգերը և այդ պատճառով տեղական շուկան նրա համար, որպէս սպառող, չունի ոչ մի նշանակութիւն։ Ցիգլերը չէ, որ պիտի ստեղծէ գորգերի արդիւնագործութիւնը, մի գործ, որ ունի իր դարաւոր պատմութիւնը Իրանի մէջ։ Ցիգլերի արժանիքը այն եղաւ, որ արդիւնագործութեան պրօցեսը էժանացվեց· նա հայթայթում է տնայնագործներին պատրաստի թել, ներկեր, արգելեց անիլինի խունացող ներկերը և մտցրեց մի քանի նոր, եւրոպական-ամերիկական ճաշակի նկարներ։ Նմանապէս չունի ոչ մի տեղական նշանակութիւն և Լիանօզեանի ֆիրման, որ զուտ արտահանութեամբ է զբաղված։ Ասացինք, որ անգլիական հեռագրական ձեռնարկութիւնը և Լինչի նաւագնացութիւնը ունեն քաղաքական նպատակներ և շահը չէ սրանց հետաքրքրողը։ Բելգիական ընկերութիւնը, որ ունի մօտ 8 վերստ երկաթուղի (Թէհրանից մինչև շահի աղօթատեղին) և 9 վերստ տրամվայ նոյնպէս Թէհրանում, չէ տալիս $\frac{1}{2}$—1 տոկոսից աւելի ծախսած դրամագլխին։

Ինչ վերաբերում է վերև թւած բուն արդիւնագործական ձեռնարկութեանց վիճակին, որ մի մահացուցակ է կազմում, ապա պիտի գալ այն անվիճելի եզրակացութեանը, թէ երկիրը իր մէջ կրում է տնտեսական-հասարակական արգելքների մի կոմպլէքս, զանգուած, որը առ այժմ անաջողութեան է դատապարտում կապիտալիստական արդիւնագործութիւնը։ Այն ընդհանուր վիճակը, որից չը խուսափեց գրեթէ և ոչ մի հատ ձեռնարկութիւն, անպայման ցոյց է տալիս, որ այստեղ գործել են յարատեւ եւ ընդհանուր հանգամանքներ, անգրդուելի օրէնքներ, պայմաններ, որոնք ամլութեան և անաջողութեան են դատապարտում երկրի տնտեսական վերածնութեան գործը, արգելելով այդտեղ զարգացնել կապիտալիստական արդիւնագործութիւն, որ քիչ թէ շատ պիտի ազատէր երկիրը օտար պետութեանց շահագործութիւնից։ Տեղական այդ արգելքները կրում են տնտեսական, կրօնական, կենցաղային, իրաւաբանական-քաղաքական բնոյթ· պակաս դեր չէ խաղում և երկրի կլիման, իր բազմատեսակ ազդեցութեամբ։

Այդ արգելքների մասին կը գրենք միւս անգամին։

Պետրոս Զաքարեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Չինաստանը պատրաստակամութիւն յայտնեց կատարել ռուսական ուլտիմատումի պահանջները։ Պայմանագրի խախտումը նա անուանում է թիւրիմացութիւն։

✦ Ռուսաց արտաքին գործերի մինիստրութեան մէջ տեղեկութիւններ են ստացվել, որոնք հաստատում են Թիւրքաց Հայաստանում տեղի ունեցած հայերի կոտորածի մասին տարածված լուրերը։

✦ Այս օրերս, մահմեդական «Իկդուզ» լրագրի ասելով, Կազանում վախճանվեց հարուստ Ե. Կօտըրօվը, որ իր ահագին կարողութեան մի երրորդ մասը, 63000 րուբլի կանխիկ, կտակեց զանազան բարեգործական նպատակների։

✦ Կազանում երևան են հանել թուրքուհիների լայն վաճառք։

✦ Բագուի միլիօնատէր Իսաբէկ Հաջինսկին 1,200 ր. նուիրեց Բագուի ժողովրդական համալսարանի օգտին։

✦ Ֆինլանդական սէյմը ուղերձներ կայացրեց վերականգնելու օրէնդրութեան օրինական կարգը։

✦ Իլիօդոր աբեղայի սովապահութեան առիթով սպառնացել են հրաժարվել սինօդի օբէր-պրոկուրոր Լուկեանովը և Անտօնիյ արքեպիսկոպոսը։

✦ Ահագին քանակութեամբ եկած ձիւնի պատճառով Ռազմավիրական ճանապարհի վրա հաղորդակցութիւն չը կայ։

✦ Գոմէլի գաւառի կալուածատէր Լիստովսկին, ի յիշատակ գիւղացիական ազատութեան 50-ամեակի, գիւղացիներին բաժանեց իր անասունները և 200 դեսեատին հողաբաժին։

✦ Բագուի Բարեգործական Ընկերութիւնը ձրի ճաշ է տալիս քաղցածներին։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏ. ՀԵՌ. ԳՈՐԾ.

10 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Տեղական ինքնավարութեան մասնաժողովը վերջացրեց Աստրախանի նահանգում զեմստվօ մտցնելու օրինագծի քննութիւնը։ Դումայում տեղեկաբեր կը լինի Զվէնգինցէվը։

ՕԴԵՍՍԱ։ «Կոմս Ստրօգօնով» նաւի վրա այրվեց 300,000 րուբլու ապրանք։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ։ Դուման որոշեց փետրվարի 19-ի յաւերժացման համար բանալ արհեստաւորաց դպրոց, որի համար յատկացրեց 45,000 րուբլի։

Կ. ՊՈԼԻՍ։ Ցանկարծամահ եղաւ ռուսաց դեսպանատան պաշտօնեայ Շչերբօն։

ԲՈՒԴԱՊԵՇՏ։ Եկաւ ռուսաց դեսպան Գիրսը կնոջ հետ։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Պալատը ընդունեց այն օրինագիծը, որով 5.300,000 դոլլար է յատկացվում կղզիների ափերը պաշտպանելու համար։

Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺԻՇԿ
Վ. ԱՐԾՐՈՒՆԻ
Ականջի, քթի, բկի,
հիւանդութիւններ,
Ընդունե- (առաւօտեան 9—1 ժամը.
լութիւնը (երեկոյեան 5—7 ժամը.
Վելեամինօվսկայա փ. № 13, տ. Սէյլանովի, 3-րդ գիմնազիայի կողքին։
(օ. մ.) 1227. 100—44

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՒԷՐ

1911 թ. փետրվարի 13-ին, կիրակի, ցերեկվայ ժամը 11-ին, Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան դահլիճում կայանալու է Քամոյեան ս. Գէորգ եկեղեցու ծխական արտակարգ ժողով՝ լսելու Հոգաբարձութեան տեղեկագիրը և հարկ եղած տնօրինութիւնն անելու՝ անյետաձգելի մի շարք խնդիրների մասին։

Հոգաբարձութիւն

(շ. կ.) 130. 2—1

ԱՐԱԳ
ԵՒ
ՀԻՄՆԱՒՈՐԱՊԷՍ
ՆԵՐԿՎՈՒՄ ԵՆ
ՄԱԶԵՐԸ ԵՒ ՄԻՐՈՒՔԸ
ՄԱԶԵՐԻ ՆԵՐԿՈՎ
ԸՆԿՈՅԶԻ ՀԻՒԹԻՑ
Պարֆիւմերիայի
№ 4711.
Անվնասակարութեան համար երաշխաւորութիւն
ԻՍԿԱԿԱՆԸ ՄԻԱՅՆ ՄԱՐԿԱՅՈՎ
ՊԱՐՖԻՒՄԵՐԻԱ
ՖԵՐԴ. ՄԻՒԼԳԵՆՍ № 4711.
Կեօլն—Ռէյնի վրա։ Հիմնված 1792 թ.։ Բաժանմունքը Ռիգայում։
Մատակարար շատ Բարձրագոյն Պալատների։
Ծախվում է դեղատներում, դեղատնային և պարֆիւմէրային խանութներում։
(M. 436432/436450) 32. 6—3

ԴՈՒՔ ԾԱՆՕ՞Թ ԷՔ
բօրսային օպերացիաների հետ։
ԴՈՒՔ ԳԻՏԷ՞Ք
որ հարուստների ֆինանսական բարեկեցութիւնը ստեղծել է բօրսան։
ՁԵԶ ՅԱՅՏՆԻ՞ Է
որ ներկայ մոմէնտը միանգամայն բարեյաջող է բօրսային օպերացիաների համար՝ ֆօնդերով և դիվիդենտային արժէթղթերով, գլխաւորապէս վերջիններով, ինչու որ երկրի տնտեսական կեանքի առաջադիմող բարելաւութիւնը և արդիւնաբերութեան ու առևտրի զարգացումը անխուսափելիօրէն ազդում են արժէթղթերի գների բարձրացման վրա։
ԴՈՒՔ ՑԱՆԿԱՆՕ՞ՒՄ ԷՔ
ծանօթանալ բօրսային շահագործման տեխնիկայի հետ և պարզել ձեզ համար, թէ ինչպէս Ռօտշիլդները և դրամագլխի այլ թագաւորները բօրսայի միջոցով ձեռք են բերել իրանց հարստութիւնները և թէ ինչպէս այժմ հարստութիւն են դիզում նոյն միջոցով սովորական մահկանացուները։
Պահանջեցէք բոլոր գրավաճառանոցներում, քիօսկերում եւ երկաթուղային կայարաններում ՀԵՏԵՒԵԱԼ ԳԻՐՔԸ՝
ՀԱՄԱՌՕՏ ԵՒ ՄԱՏՉԵԼԻ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐԻՆ՝
„ПУТЬ КЪ БОГАТСТВУ“
ԲՕՐՍԱՅԻՆ ՕՊԵՐԱՑԻԱՆԵՐ
Գինը 50 կօպէկ։
Հրատարակութեան պահեստը. С.-Петербургъ, Разъѣзжая ул., д. № 5, СПБ. Николаевская артель.
Փողերը կարելի է ուղարկել փօստային մարկաներով։
ԱՌՆԻՒՏՐԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԶԵՂՉ։
(12, 26) (П. 20761) 105. 2—1

«ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» գրավաճառանոցում վաճառվում են հետևեալ
ԲԱՌԱՐԱՆՆԵՐԸ

«Ռուսահայ-բառարան», Յ. Ղաղբաշեանի	8 ր. —
«Հայերէնից-ռուսերէն», » » (բաժանորդագրութիւն)	5 ր. —
«Ռուսերէնից-հայերէն», Յ. Թումանեանի	— 75 կ.
«Հայերէնից-ռուսերէն», » »	1 ր. —
«Հայերէնից-հայերէն», պատկերազարդ, կազմով, Գարամաճեանի	5 ր. —
«Բառգրքոյկ», արարատեան բարբառի, Մ. Նաւասարդեանի	— 30 կ.
«Ֆրանսահայ բառարան», Լուսինեանի կազմած	15 ր. —
«Բառգիրք արուեստից և գիտութեանց», Քաջունու	
«Գերմաներէնից-հայերէն», Կոյլոսի կազմած	7 ր. —
«Հայերէնից-ռուսերէն», Խուդաբաշեանի կազմած	10 ր. —
«Բառգրքոյկ», Ա. Աբեղեանի	— 20 կ.
«Ֆրանսերէնից-հայերէն», Նուբարեանի կազմած	10 ր. —
«Հայերէնից-ֆրանսերէն», Ոսկեանի կազմած	3 ր. 50 կ.
«Բառգիրք լատիներէն և օտարազգի դարձուածքների», Վ. Ա.	— 75 կ.
«Բառարան պարսկերէն», ըստ կարգի հայկական այբուբենից	10 ր. —
«Ռուսերէնից-հայերէն», բառարան Երէցփոխեանի	5 ր. —
«Բառարան պարսկերէնից-ռուսերէն», Տրօբանովսկիի	10 ր. —

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ «Гуттенбергъ», Г. И. Галустянцу.
143. 2—1

ՀԻՊՆՈՏԻԶՄ
ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԷՔ ՀԻՊՆՕԶԱՑՆԵԼ
Հիպնոտիզմը բնական ձիրք չէ։ Ամէն ոք կարող է տիրապետել այս խորհրդաւոր գիտութեան։
—o—
Հիպնոտիզմ սովորելը նոյնքան հեշտ է, որքան ուտել խմելը։
Հիպնոտիզմը կը բժշկէ հիւանդութիւններ և կուղղէ մոլորութիւններն ու վատ բարքերը։
Հիպնօզական ցուցահանդէսները չափազանց զուարճալի են։
Սովորեցէք հիպնօզացնելու արուեստը։ Մշակեցէք ձեր մէջ ներշնչելու զօրութիւնը և այդ աքանչելի ոյժի միջնորդութեամբ դարմանեցէք հիւանդութիւններ, տուէք ապշեցուցիչ ցուցահանդէսներ թատրոններում կամ մասնաւոր սրահներում և դառէք պրոֆէսիօնալ հիպնոտիստ։
Սովորելու ծախքը շատ չնչին է։
Ստացէք իմ «Ինչպէս հիպնօսացնել» պատկերազարդ գրքոյկը, որը կը տայ ձեզ լիակատար բացատրութիւն Հիպնոտիզմի, Մեսմերիզմի, Հոգեբուժութեան, Ներշնչման, Հոգետեսութեան և Տելեպաթիի մասին։ Այս գրքոյկն ստանալու համար պիտի ուղարկել 10 կօպէկի նամականիշ ճանապարհածախքի համար։
ԳՐԵՑԷՔ ԱՅՍՕՐ։ Գրեցէք ձեր անունն ու հասցէն որոշ։
Դիմել հետևեալ հասցէով՝ Америка. Haroutun Shekerjian. 3758 Indiana Ave. Chicago Ill. U. S. A.
(ե.շ) 689. 100—70

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)
կատարում է ամէն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրօշիւրներ, բլանկներ, աֆիշաներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն։
Ընդունվում են տպագրական պատուէրներ հետևեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, աբխազերէն և լեռնականների բարբառով։ Պատուէրները կատարվում են մաքուր, ճշդօրէն և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։
Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազմել տալ, կամ բրօշիւրներ շինել, ու այնու յանձնել։
ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԷՅՍ-ԿՈՒՐԱՆՏԻ ԳՆԵՐՈՎ։
Տէլէֆօն № 67.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.